

երբէք ջուր չեն խմում: Բայց և այնպէս այդ անասուններն անհասկանալի անուշ կոթ են տալիս որից և պատրաստում են Ռոկֆոր կոշուած գոփական պանիրը: Բայց ամենից դարմանալին այն է, որ մարդիկ էլ կան որոնք կարող են առանց ջրի ապրել: Անտրոնական Ափրիկայի նշանաւոր ցեղերից մէկը: Հատնտոաները, կարող են առանց ջրի ապրել: որքան էլ աթթ ուցում է թող լինի եղանակը և կամ կիզիչ անապատի աւազը:

\* \*

Սու տնտես. Վոս ժամանակներս Երլանդիայում մի խիստ հազուադէպ երևոյթ է պատահել, այն է, սև անձրև է եկել: Անձրև է տեղացել 4800 քռ. մղոն տարածութեան վրայ և այդ միջոցին այնքան թանձր խաւար է պատել, որ թրուշուներն իրենց բներն են քաշուել, տներում ստիպուած են եղել ճրագ փառելու: Իսկ անտիտպար մարդիկ յուսահատուած սպասում են եղել աշխարհի կործանման: Սակայն սև անձրև գալուստ պարզ ու հեշտ բացատրութիւն է տրուում նրանով որ հարաւային Ետրլանդիայի և Հիւս. Անգլիայի գործարանների մուրն ու մրուրը խառնուելով մտախնդի հետ քամու սաստկութիւնից ծոփ փայտով Երլանդիա են անցել և անձրևի հետ ցած է թափուել: Այդպիսի երևոյթ նկատուած է 1896 թուին Սիրիում: Սամարա քաղաքից սկիզբն առնելով, արագ անցնում էր մի սև ամպ մինչև Մանչեսթրի սահմանները: Ցեանոշներն առաջ հրդեհուած անասնի ծուխ բնօգնեցին. իսկ երբ այդ թանձր մշուշն զետեղ փրայ նստաւ, նոր հասկացան նրա ճագումը: Այնքան սաստիկ էր տիրապետող խաւարը, որ 50 քայլի վրայ ոչինչ չէր կարելի որոշել. իսկ մրի հոտից մարդու շնչառութիւնն էր կտրուում:

\* \*

Բոյսերի սիրուններն ինչպէս են պաշտպանուած տնտեսներից.— Անշափ տեղացող անձրևներից զեանախնձորն ու միւս զաշտային պտուղները փրթում ու փչանում են: Բնութիւնն ինքը հոգում ու խմումում է այդպիսի բոյսերի զանազան մասերը: Ինչպէս են նրանց տերեւները, որոնք շարունակ ենթարկուած են անձրևների ազդեցութեանց: Եւ հենց այդ է պատճառը, որ մի քանի խոտաբոյսերի և ծառերի տերեւներն իրենց թեր զիրքով նպաստում են, որ անձրևի կաթիլներն երկար ժամանակ չման իրենց վրայ, այլ հոսն ներքև: Բացի դրանից, շատ բոյսերի տերեւների միջին երակը մի տեսակ խողովակ է կազմում: որը ճիշտ է, այնքան էլ խոր չի լինում: Բայց և այնպէս տերեւի միւս մասերից անձրևի կաթիլներն այդտեղ են հասարկում և ապա ցած թափուած: Ետտի տերեւներն էլ ծածկուած են լինում աղուամազով, որը, կարծես թէ, ծածկոյթի դեր է կատարում և լծոյ չի տալիս որ անձրևն անմիջապէս կպչի իսկական տերեւին: Ի հարկէ, այս պաշտպանողական միջոցները խիստ անձրևային եղանակներին առանձին ծառայութիւն չեն կարող մատուցանել բոյսերին:

\* \*

Հոյր որպէս կերակուր — Արժանահաստ ծանապարհորդներից ոմանք պատմում են, որ այն հնդկիները, որոնք ապրում են Օբինոկո գետի

վերին հոսանքի վերայ, հող են ուտում և այդ է այն դիտար պատճառը, որ նրանք շատ շուտով են մեռում: Սակայն հող ուտելու այդ օտարոտի սովորութիւնն ամենին կախումն չունի անդի պահասութիւնից: որովհետև ամեն հող իրքև կերակուր չի ծառայում: Հնդկիներն այդքանք շատ լաւ են հասկանում: Նախ փորձում են և եթէ նրա մէջն անհրաժեշտ բաղադրութիւնները չեն գտնուում, դէն են ձգում: Հնդկիների գործ ածած հողը բաղկացած է լինում գեղին կաւից, որն իր մէջ պարունակում է երկաթի թթուուկ և բուսական մանր մնացորդներ: այսինքն բարակածին և ածուխ:

Ստեղծուց առաջ գործադրուելիք հողը թրքում են և ապա շորացնում: Դիտի վերայ կամ տապակում իւզով և կամ թէ չէ ձկան ճարպով: Այսիննու ճաշակով այդ ձևով պատրաստուած հողը բոլորովն համից ու հոտից զուրկ բան չի լինում:

Մոսկուայից: Եզր. Ժամհարեաններից: ստացել ենք հինգ օրինակ Արարատի-ի բաժանորդագին, որոնցից երեքը թողուած է խմբագրութեան անօրէնութեան: Մեք որոշեցինք մի օրինակ ուղարկել Լէյպցիգի հայ ձեմարտական լրկիրութեան, երկրորդը Պարսկաստանի Մարտիա քաղաքի Հայոց մասնադպրանին, երրորդը Թուրքի Հայոց կեդրոնական մասնադպրանին:



Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ս Ծ

ԵՐԵՎ ԶԵՆԱԳԻՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ

և

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.

(1810—31.)

1881—83 թուերին, մինչ փոխանորդ էի Ալեքսանդրապոլում, անդոյն Ալեքսանդր Գրիգորի ուսուցիչ պ Ալեքսանդր Միխայիլովի սիրայօժար կերպով տուեց ինձ երեք ձեռագրներ, որոնց մասին հարցախրութեանս բաւականութիւն ապուց յետոյ: Ես խորին շնորհակալութեամբ ձեռագրները յետ գործերի ձեռագրները մարտի նոտր գրով են գրուած և հետաքրքրական են ոչ այնքան հնութեամբ, որքան բովանդակութեամբ:

Մասնաններից առաջինը մեծադիր կաշակագմ է 255 երեսից բաղկացած: Այս գրքի վերապատմութիւնն է Եւստակիացրութիւնը նախնեաց:

Երկրորդը՝ միջակադիր հասարակ կազմով 138 երեսից, Այս գրքի վերապատմութիւնն է Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու առաքելոյ: Գրքի քաղցածակալ ի յայն ի յայն ի կայ

բարքաւ ի մեռն Տնն. Տնն. Կերսիսի Լամբրուացոյ արհեստագործի Տարսոնի կիլիկեցոյ ի բունն հայոց ՈՒԸ եւ այլմ գործնայ օրինակցաւ ի նոյն զապահարէ ի բունն հայոց ՌՅԲ: Ի դռնն սուրբ Հռիշակապետ եկեղեցոյ որ ի Պարսաւ:

Երրորդը՝ նշնպէս միջակադիր, հասարակ կաշեկազմով 187 երեսից բաղկացած. Այս գրքի վերատառութիւնն է. Էւարտու Նախու թիւն կամ հաստատու թիւն յաստարացոյն գեղայ մեռում ձեւաբանի կամ յայնի պայտոյց նոր ներմուտնոյ լիկեցոյ վերադասելի Հայր Միխայիլի Չամկանց (եւ յորտ Եւրամուրեան իւրոյ: Քաղեայ ի բունն մեռացի գրուածոց իւրոց) գործի ձեւայի մղեցաւ ի մեռն վեր, յամի 1815 մարտի 4:



Առաջին գիրքը՝ նամակագրութիւնը նախնեաց մի հաւաքածու է գանազան գրութեանց: Հաւաքածուն կազմում են — Ընտրհալու՝ Յունաց կայսեր և պատրիարքի հետ ունեցած գրագրութիւնները (այսուած Ընդհանրական կոչուած մասնունում). — ներքեւ Լամբրուացու՝ Լեռն թագաւորին գրած պատասխանը (այսուած Աննետկու՝ Գրիգոր ազգայի նամակահեաց հետ 1865 թուին). — Փօտ պատրիարքի՝ Հայոց Զարարիա կաթողիկոսին գրած թուղթը Քաղկեդոնի ժողովի առթով. — նոյն պատրիարքի՝ կորնթոս առաջին գրածը. — Աղէքսանդրիայի Աղէքսանդր եպիսկոպոսի՝ Առտանդնուպոլոսի Աղէքսանդր հայրապետին՝ Նիկիայի ժողովից առաջ գրած նամակը. — Գրիգոր Տղայի՝ Գրիգոր Տուանդուզուն գրած պատասխանը (այսուած Աննետկու՝ 1865 թ) — Նիկիայի Յովհաննէս արքեպիսկոպոսի՝ Հայոց Զարարիա կաթողիկոսին Օննդեան և Յայանութեան տնի առթով գրածը. — ներքեւ Լամբրուացու՝ Աւսիորի Յուսիկ արքեպիսկոպոսի ճիւղաւորին գրած պատասխանը. — Էւարտանունութիւն առ օրէնս Քրիստոսի և հաստատութիւն՝ թէ ոչ է պարտ զվիճակ եկեղեցական աստիճանի ձգել ընդ մարմնական աստիճանութեամբ. — Աերտան հաստատութիւն ոչ ժողովեցուցանելոյ արդատահմի զառաջնորդական պատիւ ի պատմութենէ Հարցն մերոց. — Ի նոյն խորհուրդ զարձեւալ՝ յորում թէ զմեր ազգս ունիմք իշխանութիւն դատել և ոչ զայլ. — Թուղթ Սիմէոնի Սոոյ կաթողիկոսի առ Փիլիպպոս Եղմիածնի կաթողիկոս. (այս գրուածքը հետաքրքրական է իւր բանեցրած լեզուովն ու ձգովը որը մենք չուսով կը հրատարակենք). — Ի զրոց անտի որ կոչի զառանութիւն հաւատոյ նորին սրբոյն Ամանասի հետեւումն յառաջ ասացելոց յազազս նոյն ինքն ամենասուրբ Հոգւոյն. — նորին Ամանասի հետեւումն յառաջ ասացելոց յազազս նոյն ինքն ամենասուրբ Հոգւոյն — նորին Ամանասի եպիսկոպոսի արտագրութիւն առաքելական յազազս Եստուածայնոյն մարմնաւորութեան Եստուածոյ Բանին. —

նորին (Ամանասի) առ Յոքանիոս թագաւոր յազազս հաւատոյ — Թուղթ Աղէքսանդր կաթողիկոսի Հայոց առ Աղէքնուս պապ վասն անուղղայ գնացից միտնարաց. — Արիստակէի իմաստասիրի թուղթ առ Աղէքսանդրոս թագաւոր պատմ. յազազս աշխարհիս. — Մի յիշատակարան գրուած ՌճԵ թուին մի Էւարտանի կողքին Փիլիպպոս կաթողիկոսի Պոլիս գնալու առթով. — Յիշատակարան գնողի Յիշատակարան գրողի Էւարտանին. — Եիշատակարան գրող. ի թուականիս՝ 219 ի ժամ սուրին գրուած թեան փոխեցաւ առ Քրիստոս բարեպաշտ իշխանաց իշխանն արքայեցոյցն Հայոց և տեառնս \* Աստակ տէր Քանճոյն. ի մարտի ամսոյ ԹԳ. յաւուր երկշարթով, ընդ երեկս աւուրն, ի մայրաքաղաքին Սիւս և թաղեցաւ ի սուրբ ուխտն Ակունք. որոյ ողորմեցի Տէր Յիսուս Քրիստոս ամեն. — Կարգ և թիւ թագաւորացն Հայոց ի Արիմեցոյ Մարտիրոս վարդապետէ (ոտանաւոր). — Պատմութիւն յազազս առնելոյն առաջից զսուրբ Նիկիոպոլոս եկեղեցին ի ձեռացս Հայոց և տաղոյն զսուրբ հրեշտակապետ եկեղեցին փոխանակ նորին ի Պոլիս. — Աերտան պատմութիւն սոյն վերջիշեալ (Հրեշտակապետ) եկեղեցոյս յամենեւ արտեալ. — Թուղթ Հայր Միքայէլի Չամկան առ մարան վարդապետն իւրեանց կաթողիկոսի որք եկին ի սուրբ եկեղեցին Հայոց վասն միտանութեան և օրոյ. — Օրինակ թղթոյն Յովհաննէս վարդապետի Զօհրապետն զոր օրէ առ ազգականս իւր ի Փարիզու \* (այս երկու թղթերը գործիս ընթացքում կը տպուենք). — Թուղթ առ կայսրն Հոստանց Ալէքսիոս. — Թուղթ Սահակայ Երծրունոյ առ Մոսթոս Երեւնացի. յորս և բանք Սահակայ Բագրատունեաց իշխանին ի միում անգուց լինելով երկուցն. — Պատասխանի թղթոյն Սահակայ Երծրունոյ, յորում և բանք մարգարէականք. և պատմութիւն վասն սուրբ պատկերին տիրամօրն ի Մոսթոսէ Երեւնացոյ արտայայտեալ \* \* Պատմութիւն վասն գեանաշարքի երկրիս Արարտեան ի ՌճԵԸ յամենան յունիսիս. — Թուղթ Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոսի առ Առտանդն կաթողիկոս. — Թուղթ Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոսի Օրբելեան առ Զարարիա էրզարբոս Հայոց:

Երկրորդ գիրքը՝ «Միկնոսրիս Յայտուրեան Յովհաննէս առաքիլոյ» ունի առաջարան որով Առտանդնուպոլոսի Արքեպիսկոպոս Թեառախոսը Յովհաննէս Յայանութեան գիրքը ընդունելի է համարում և Պոլիսում գումարուած տիեզերական ժողովով: Առաջարանութեան մէջ յիշուած են եկե-

\* Լուսնայ 1900. զիտ Թ. Կ. 300: Հանդես անտրեայ 1900 փետ. ր. 2. Կ. 62:  
\*\* Լուսնայ 1900 ր. Թ. զիտ Կ. 302

ղեցու մի քանի յայտնի սուրբ Հարց անուններ՝ որոնք կարևորութիւն են տուել Յայտնութեան գրքին, որպիսիք են, Աթանաս Աղէքսանդրու, Բասիլիոս Աեսարու, սորա եղբայր Գրիգոր Նիւսացի և ինքն Մէջ է բերուած նաև Ապագովիտայի Աեսարիայի եպիսկոպոս Անդրէի Համառօտ տեսութիւնը՝ Յոգհաննու Յայտնութեան մասին, Վարևոր եմ Համարու՛մ թառ առ թառ արտազրեւ Աւարտանացու՝ «Պատճառ թարգմանութեան մեկնութեան» վերնագրով Հատուածը, որով բացատրուած կը լինին թարգմանութեան պատճառն ու Հանգամանքը:

Ես՝ Ներսէս նուաստս ի Քրիստոս և տարտամբ է յուսուճափարաց, վերջին և նուազեալ ժամանակի շնորհքով յընթեանումն իմ՝ զՅայտնութիւն Յոգհաննու՝ տաղանակէի յանձն՝ առ ի ոչ գիտել զուճուճն բանից սքանչելեացն, և այսր անդր խաղճելով զմեկնութիւն նորին ի մերս բարբառ՝ ոչ գտի «Յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիօք և շրջելով որ անդ վանորայս Հոռօսոց և Պատմեաց՝ ապա տենչուճն բորբոքէր ի միտս իմ. ուստի և քննեալ գտի ի գրեանս Հոչակաւօր ուխտի սրբոյն «Պօղոսի ի քաղաքի անդ զմեկնութիւն Յայտնութեանս ի լուսնալառ բարբառ և ի նոյն գիր, որով վարին Պատմեք, երկուց մեկնչաց արարեալ, և փաճագեղով տալ թարգմանել, ոչ գտի զգր, որ յայնմ արարաւոյ կարէր ի Հայս յեղաշրջել, Ապա ելեալ արաքայոյ քաղաքին ի սուրբ լեան՝ որ ի Տիւսիսոյ Վոզմն, անդր ի մի ի վանորեկնց Հոռօսոց որում անուճն էր Պէթիաս, առ ոմն արգելական միայնակեաց, որոյ անուճն էր Բասիլ, քննեալ գտի զգանճակին ի Տիւսիսոցի բարբառ և ի գիր ուղղաբան Վալայելուչ, որ լեալ էր Աթանասի պատրիարքին ընդին քաղաքի, և ինդրեալ աղաւանջք ի բարեմիտ առնել, առեալ փութացայ գրովքն ի Հայրապետական ամբոճն, առ տերն իմ և կամեողեկոմն սուրբն Գրիգորիս զօր ծանուցեալ՝ ուրախ եղև է յոյժ, և Հրամայեաց թարգմանել ի ձեռն մեարապօղտին Յերապօլսոյ Աոստանգեայ, որ անդ ընդ Հոգիանեալ սրբոյ Հայրապետին Հանգչէր, և սկսեալ սօգնականութեամբն Աստուծոյ և սրբոյ տանն, նա ի թարգմանել և ես ի գրել, վերընձայեցաք սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց ուսումասէր մանկանց զայս սքանչելի Աստուածային յայտնութեանս մեկնութիւն:

Արդ աղաչեմ զընթերցողս, և զիմաստութեան սիրողս՝ յիմանալն զխորս իմաստիցն Աստուծոյ քննութեամբ, զսուրբ Հայրապետն Հաւոյոց զտերն իմ զԳրիգորիս զբարեմիտն և զբարեմտերն և զառիթն թարգմանութեանս և Հրամայող՝ մաղթեցէր ի Քրիստոս յաստիս խաղաղութեամբ պահել, և ի Հանդերձեալն՝ սրբոց իւրոց երկնից արքայութեանն ժառանգակից ընդունել, Այլ և զԱոստանգին մեարապօղտն որ թարգմանեաց, և զՎասիլ կրօնաւորն որ զօրինակս ետ, Քրիստոս ու-

ղորմութեան իւրոյ արժանացուցէ ազօթիք ձեր, «Թարգմանեցաւ աստուածային յայտնութեանս մեկնութիւն ի թուականիս Հայոց ՌԻԼ-ին, և ի սուրբ և ի Հայրապետական ամբոճն, որ կոչի Հոռօսկայ, շրջապատեալ յազնական աղբրէն Եփրատայ, որ մասապարաբէ ընակչացն զամենայն մարմնական պիւտոյս ինամօքն Աստուծոյ, ընդ Հոգիանեալ աստուածընկալ Նշանին Վանկոյ և այլ սքանչելի սրբոցն՝ որ Հանգուցեալ են անդ ի փառս Աստուծոյ:

Քսկ սրբազրեցաւ ի նշանագրութենէ քերթիտական արհեստի ի յապահով անապատս սուրբ «Գ(Է)որգ ի մէջ լիբրինա Տիւրոսի (Տաւրոս), որ է ի զգահ Արիիկիոյ և ի սկիզբն Պամփիլեայ, ձեռամբ մուսասա եպիսկոպոսի նորին մայրաքաղաքին Տարսնի տառապելոյս Ներսէսի, շնորհք և ողորմութեամբ «Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտեանից ամէն:

Գիրքը արտագրուած է Աոստանգնու պղնձայ պալատու զպրատան գրքատան մէջ իսկ վերստին արտազրուած է եղել 1853 թուին փետրվարի 15-ին:

Արտգնեալ գիրքը իւր բովանդակութեամբ արդէն յայտնի է, վասն որոյ ես այլ ևս չեմ երկարացնիլ գորս մասին:

Նրորոգ գիրքը, որ է «Շարունակութիւն կամ Հաստատութիւն» մի քննադատութիւն է մոլեռանդ կամօղիկից գրուած Հանգ. Չամչեան Միքայէլ վարդապետի՝ Վահան Հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ գրքուկին \*:

Այդ քննադատութիւնը սկսվում է Հետևեալ նախաբանով—

«Ձոր ինչ միանգամ գրեալ էր յառաջին անդ մերումս տեսարանի երեկեցուցչի մոլար վարդապետութեանց արքայեանց, թեպէտ որչափ ինչ մարթ էր՝ ըստ կարի Նկարագրեցաք զմոլորաշաւիղ ընթացս կարծեաց և մտաց իւրեանց, քաղելով ի բուն գրուածոց նոցա, որ բողոքովն հակառակ էր սոլջամիտ վարդապետութեանց ընդհանուր եկեղեցւոյ սակայն այսօր ամենայնիւ սակս գտանելոյ ի մտաս կամ մթութիւն բոտից կամ գաղտնութիւն բանից, և կամ անյայտութիւն Տեղինակաց նոցա, զօրցէ և ընթերցողաց առիթ լինէր երկրայելոյ և խորհելոյ այլազգ, և կամ ի բարին մեկնելոյ, և այլ սակայն այժմ այն ամենայն երկրայութիւն տարակուսանոց և կասկածանաց ի բաց փարաքին և մերթին, որով վերստին հաստատին միտք մեր աւելի քան զառաջինն ի վերայ նոցա, և ոչ ևս մնայ այսօր հետև երկրայութիւն:

«Վերին նախախնամութիւնն, որ անմօքնե-

\* Ինքն ունեւեք միսի օսկ Սարկ, Յակոբ Դաւրեան Սանահնցոյ, այժմ Սիեոյի նախանդամ Արխիեպիս Սերապան Արևոյիսկոպոսի ընդօրինակած Վահան հաւատոյն, որից եւ զնում եւք ընթերցումներ:

«ին է ի վճռին իւր — 2) ք ինչ ծածուկ որ ոչ յայտնեցի, — նոյն ինքն յայտնեաց վերստին զներքին մեք ըննային իւր և թշնամին որ ի ծածուկ՝ զիշերաւս վարժ արնութեամբ զձեռագործ և զհոգեկեցոյց տապանն քակուել հնարէր. Զներքին մերնային՝ ասեմ՝ զորոյ անունն անմարտ է ծածուկ՝ զկի ինքն յայտնի գրոշմելոյ զանուն իւր ի շէն. 2. Միքայել Զամշեանց, հիմն և քերան բոլոր արքայեան սիրաւնութեանն որ ինքն կամելով զանձն ցուցանել թէ ինչ է որ կացուցանէ վերքն հօր ակոցեան և պաշտպան ուղղափառութեան եկեղեցոյն հայոց, ունեւրով ի ձեռին զգիրք ինչ յօրինեալ յիւրմէ՝ որում և ետ անուսն Հաստատութիւնն ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցոյն»

Թէ այս գրքի բովանդակութեան և թէ քննադատութեան համար ընթերցողներին մի ծաշակ տալ կամենալով, առաջ կրերեմ նոյն ինքն հանգուցեալ Միքայել վարդապետ Զամշեանի Վասան Հաւատոյց գրքի այն էական կէտերի ցանկը՝ որոնց առիժով պէտք է խօսեր և ապացուցանէր նա Հայոց եկեղեցւոյ ուղղափառութիւնը, առաջ կրերեմ՝ նաև այդ մասին քննադատութեան սկզբնաւորութիւնը, որոնցով յայտնի կերևի թէ ով ինչ հօդի է ունեցել

Հանգուցեալ հայր Միքայել Զամշեան իւր Վասան հաւատոյց-ի նախածանօթ անդեկութիւններին վստածան տալով ասում է. —

«Աստուծոյ վստածան տուեալ նախածանօթ անդեկութեանց՝ որք կարևոր էին առ բացաւոյս իւր ամացողութիւնն առաջիկայ գործայս ի բուն իսկ նրա պատակ անգր զընթացս մեր ուղղեցուցք առաջնորդութեամբ Աջոյ հօրին՝ և ձեռնառութեամբ աղօթից սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նուսուորչին՝ Երզնէս իւրոյ սեպհական հատին և ի պարծանս քրնդհանուր հովուապետին հոռոմեական գահի արժանաժառանգ զահակալի»

«Առ արդ՝ քանզի դիտումս՝ մեր է ցրել զԲԱՀԱՆՆՈՐ շաւղարձութիւնս 2, յորս միարանն ամենայն հակառակորդք ընդդէմ՝ ազգին հայոց, մանաւանդ այժմու ժամանակի բուն հարցոյք խօսել մի առ մի զայնցանէ՝ որ բովանդակին ի ժ. զգլուխս»

Ա. թէ՛ հայր մերժեն զժողովն Քաղկեդոնի և զմեծն Աստու

Բ. թէ՛ մի բնութիւն ասեն ի Քրիստոս ընդ մեզն մի կամք և մի ներգործութիւն»

Գ. թէ՛ ոչ ընդունին զրդիսումն Հոգւոյն սրբոյ՝ ի Հօրէ և յԱրդւոյ»

Դ. թէ՛ մտար կարծիս ունին ի վերայ հանդերձեալ կենաց, այսինքն ի վերայ կայանի ննջեցե-

ղոց, արքայութեան զժողոց՝ հստուցման և ընչ 1  
 Ե. թէ՛ զՍուրբ Աստուածն խաչեցարիս ասեն»  
 Զ. թէ՛ զձեռնեղ Քրիստոսի ի վեցն յաւնվարի տունն»

Է. թէ՛ ոչ խառնեն զՅուրս

Ը. թէ՛ պահեն զխարական օրէնս»  
 Թ. զԱւերջին Օծումն շքեղունին»

Ժ. թէ՛ մերժեն զխաւորութիւնն առաքելական ամոսոյն»

Յստոս յաւելեալ ընդէլուզանն և զայլ քանի լծի մասնաւոր իրա՝ զորօրինակ թէ յիշեն զանուանս հերետիկոսաց, ձուին ոչ ասին յաւուրս պահոց, օրէպ յարեւելս աղօթեն, և ինչ Զայս ամենայն թի մասնաւորի բարգեւոյ՝ 2 հանեն վճիտ հանրական թէ ազն Հայոց է հերձուածող կամ հերետիկոս. Այլ մեր ի քննին մատուցեալ զամենայն մի բառ մի օրէն ունիմք հաւաստի առնել զստութիւն ամենայնի, և ցուցանել՝ թէ չէ մարթ և ոչ մի ինչ իրաւամբ անուանել զազն հայոց հերձուածող կամ հերետիկոս. այլ ձանաչել ուղղափառ և բառ Խանաչման կողմն ուղղափառ» —

Ահա թէ հայր Զամշեանը ինչ կէտերի վերայ է հիմնել իւր գրուածքը, իսկ քննադատի հոգու տրամադրութիւնը կերևի հետեւեալ կտորից, որ պատկերն է ամբողջ քննադատական հաստատմանի որոնք հիմնուած են հեգնութեան և բացակաշուութեան վերայ, առանց օրինաւոր փաստ առաջ բերելու, օրինակ —

«Քան արացե ընդ մեր և ընդ բոլոր արքայեան միարանութեան մայր մեր հառմակական անյաղժ սուրբ եկեղեցին, զի նա ինքն եցոյց մեզ և ուսոյց խորշիկ յեկեղեցոյն հայոց իրեն ի հերետիկոսաց և ի հերձուածողաց, ապա թէ ոչ, սխալեցաւ ինքն համայն աստուածարանօք իւրովք, սխալմամբ բառ այնմ՝ ընդունայն, և կամ՝ վասն շահասիրութեան իւրոյ ի նանիր բաժանեաց դուրդափառս ի հայոց հերձուածողաց, զի բառ մնաց բովանդակ արքայականաց՝ հայր ևն ուղիղ և ուղղափառ»

«Առ արդ՝ Ա. և Միքայելն Զամշեանց բերան և հիմն բովանդակ միարանութեան յեռորոշեալ զնիւթս ինզբոց իւրոց ի տասն ինզիրս, նախ այսպէս յառաջանայ ի ինզիրն առաջին»

1. Ե. Թէ մերժեն զգլխաւորութիւնն առաքելական ամոսոյն  
 2. Թէ ներհոյսիս են եւ ներձուածող.  
 Ե. Թէ զվերջին օծումն յնկոսեցին.  
 Ը. Թէ ոչ խառնեն ի խառնուոյ պատարացի բուր.  
 Թ. Թէ զմեռնեղ Քրիստոսի ի վեցն յաւելարի տունն.  
 Ժ. Թէ մտար կարծիս ունին ի վերայ նախեղծեալ կենաց, այսինքն ի վերայ կայանի ննջեցն արքայութեան եւ զժողոց նաւուցման.  
 2. բարեկալ ի վերայ հայոց»

1. դիտումս.  
 2. շաւղարձութիւնն.

Առաջ է բերուած Չամչեանի գրածը Քաղ-  
կեղծոնի ժողովի մասին:

Թէպէտ և հանգ. Միքայէլ վարդապետ Չամ-  
չեանի քննադատը համարում է նրան հակառակ  
հռոմեական եկեղեցուն: բայց է Միքայէլ Չամ-  
չեանի գրուածքը մի ջատագովութիւն է հռոմեա-  
կան եկեղեցուն որի համընթացութեամբն է նա  
աշխատում: Հայոց եկեղեցու ուղղափառութիւնը  
հաստատել, միայն պատարակելով միսիօնարներն  
յանդուքն և խոսվայոյզ վարմունքը և անակղի  
յարձակմունքը Հայոց եկեղեցու վերայ՝ որին հե-  
րետախոս և հերձուածող էին համարում նրանք:

Քննադատութիւնը վերջանում է Մ. Ա.  
Չամչեանի աշակերտ Պօղոս վարդապետ Թեկերեանի  
«Յայտարարութիւն» ողջամիտ գաւանդութեան մեր  
Հայաստանեայց եկեղեցւոյ՝ գրուածքի քննադա-  
տութեամբ: որից վերառուած կտորներից երևում է  
որ հռոմեական և լուսաւորչական հայերը կամե-  
նայով խտրութիւնը մեջտեղից բաժնալ՝ մատուց-  
նն միանալ և յարմար դէպքերն էլ օգնում  
են Այգ ժամանակները յուզուած է լինում  
Երուսաղէմի Ս. Տեղեաց խնդիրը, և հայերը  
(լուսաւորչական և հռոմեական) միարան սիրով  
աշխատում: աղաատւմ են Հայոց պատկանեալ սուրբ  
անկիքը Յունաց յափշտակութիւնից: Այս յարա-  
բերութեանց ժամանակ աւելի մտերմանում են հռոմե-  
ականներն ու լուսաւորչականները, իսկ ընդորովն  
կրօնապէս միանալու համար՝ հռոմեականները  
հինգ կէտեր են առաջարկում՝ լուսաւորչականե-  
րին խոստանալով որ, եթէ Լուսաւորչական հա-  
յերը ընդունեն այդ հինգ կէտերը՝ իրանք կը միա-  
նան ազգի հետ ընդունելով Հայոց բոլոր ծէսերը  
և արարողութիւնները առանց պակասեցնելու կամ  
աւելացնելու և Ս. Լուսաւորչի արժանաժառանգ  
յաջորդ օ. Էջմիածնի Պատմ. դիկոսին կը ծանաչեն  
իրանց առաջորդ և կոսաւոր:

Այս հինգ կէտերը քննելու համար Ա. Պօլ-  
սոյ օ. Էջմիածնի եկեղեցում հինգ անգամ ժողով  
են գումարում: Այգ ժողովներին մասնակցում են  
Ա. Պօլսոյ պատրիարքը, Չմբնմիայի Կարտիրոս  
արքեպիսկոպոսը՝ Ստեփան վարդապետի հետ: Բը-  
րուսայի Պօղոս արքեպիսկոպոսը՝ երկու վարդապետ-  
ներով, ինքն կաթողիկ Թեկերեան Պօղոս վարդապետը,  
Թոխազու Երեմիա եպիսկոպոսը, օ. Երուսաղէմի  
Վէբիլ Պօղոս վարդապետը, Մշու օ. Կարապետի  
Վէբիլ Պարզան վարդապետը, ոմն աէր Մեսրոպ  
բաշանայ, երեք աշխարհական անձինք, որք են:  
Մահաբեհ Ասարէլ ամիրայ փառօգապետ, Չարագեան  
և Սախոյեան Գրիգոր ամիրաները, իսկ վարժա-  
պետներից մասնակցում են Պալատու գպիր Գեորգը,  
այլև Մեսրոպ, Խաչատուր և Թարութիւն և այլ:  
Թուով 18, անձինք: Մենք այդ հինգ կէտերն ու  
նրանց պատասխանը չենք զնում՝ այստեղ առանձինս:

որովհետև դրանք արդէն կան է Թեկերեանի յայ-  
տարարութեան մէջ, որ ամբողջովն մէջ ենք բե-  
րում Երեստակէս Սրբազանի ընդօրինակած Աս-  
հան հաստատելից:

«Յայտարարութիւն» ողջամիտ գաւանդութեան  
Հայաստանեայց օ. Եկեղեցւոյ, ի Հայր Պօղոս  
վարդապետ Թեկերեան, յաշակերտէ Ա. Հայր Մի-  
քայէլ վարդապետի Չամչեան: զայս գրեալ ի Պօլ-  
սոյ առ օ. Էջմոն Էջմիածնի:

Եկեղեցին Հայաստանեայց ի սկզբանէ և այս-  
օր ընդունի և գաւանդի զուգարափառ հաւատս ճըշ-  
մարտութեան, և քանզի զկիրառութիւն բառից,  
որ ի բանս հաւատոյ այլազգ իմանային և իմանան,  
յայտմանէ բաժանումն անկեալ է ի մէջ մեր: Սմին  
իրի առ ի զարման տանել այսմ և առ ի բաժնալ  
զայս բաժանումն: այժմ՝ կոսմիք սովին յայտարա-  
րական լիցիւնով հրատարակել անկեղեցուն որոշ բա-  
ռիք գմեր ուղղափառական միտս:

Նախ առաջին Հայաստանեայց եկեղեցին  
ի սկզբանէ և այսր ընդունի հրապարակու զսուրբ  
առաքելայն Պետրոս գլուխ սուրբ հաւատոյ, հիմն  
եկեղեցւոյ: Զոր այսպէս ընդունելով՝ հետևապէս  
ընդունի և ծանաչէ զյաջորդն նորին գլուխ հա-  
ւատոյ և գլուխ ամենայն եկեղեցեաց բրիտանեկից:  
Եյնչնախ ճշմարիտ է այս մեր ծանաչողութիւն:  
մինչև սկսեալ ի սրբոյ Լուսաւորչէն մինչև ցլխտին  
գարս բաղում՝ կաթողիկոսունք մեր բանիւ և գրով  
ճանեան զնա գլուխ և գրեցին նմա թուղթս ի բրե  
զլից:

Երրորդ, եկեղեցին Հայաստանեայց միշտ  
ծանաչէ ի Քրիստոս երկու բնութիւնս անշիթմ և  
անբաժան միաւորեալ ի մաննս խոստովանելով զնա  
կոտարեալ (անձն) Աստուած և կոտարեալ մարդ,  
և այժմ առ որոշ բացատրել զայն՝ յայտնի բանիք  
և սրատարակէ ուսել ի Քրիստոս երկու բնութիւն,  
զայս ընդունելով մեր՝ ընդունեմք և զսահմանա-  
դրութիւն Զորրորդ ժողովոյն Բաղկեզմի:

Երրորդ, եկեղեցին Հայաստանեայց միշտ ճա-  
նաչէր և ընդունէր և այժմ ևս ընդունի զելուսն  
կամ զանուսն Հոգւոյն սրբոյ ի Հօրէ և յԱրդւոյ,  
զոր և յայտնարարեա ընկալաւ երրորդ ժողովն  
Սոսոյ յաւուրս Աստանդեայ կաթողիկոսի Բարձր-  
բերդեցւոյ և արքային Հայոց Հեթմոյ ի ժամանակս  
Անական վարդապետի յամի Տեառն 1251:

Զորրորդ, եկեղեցին Հայաստանեայց միշտ  
ընդունի զայս ճշմարտութիւն, թէ որք միանգամ  
ի բրիտանեկից ըստ ամենայնի ի սրբութեան մեռա-  
նին, հոգիք նոցա զնան յարքայութիւն, իսկ որք  
մեռանին ի մահու չափ մեզա, ի զժոխս իջանն:  
Եյլ որք մեռանին ի շնորհս չև ևս վճարելով զպա-  
տիժ թողեալ մեզայն՝ կամ ներկի յանցանայն՝  
հոգիք նոցա զնան ի տեղի ուրեք, և անդ կրեն  
զնեղութիւն և զանձկութիւն: Բայց ի ձեռն աղօ-

Թից և պատարագաց և որորմութեանց և ս ճգանց՝ որք մատուցանին վասն նոցա ի կենդանեաց քրիստոնէից՝ գտանեն զներումն և զհանգիստ ի լրանալ պայմանեալ ժամու գնան յարքայութիւն երկնից։

«Այտրիւկ վարդապետութեամբ բացատրեցաք աստէն զուղղափառական միտս մեր՝ ոչ նորոգ ընդունելով՝ այլ ի սկզբանէ զընկալեալն յեկեղեցւոյ որոշակի բառիք առաջի զնելով՝ խոստանամք և ս զի որ ինչ հակառակ այս գաւանութեան գացի ի մէջ մեր՝ կամ ի Թիւր միտս իմանալով կամ այլազգ անդակացուցանելով՝ բարձցուք զայն ամենայն։ Քանզի եկեղեցին մեր միշտ զայսուսիկ ճշմարտութիւնս հաւատոյ ընդունի՝ և մերժէ՝ որ ինչ ներհակի այսոցիկ բառից։

«Յաղագս բանի միարանութեան և հաշտութեան ընդ ժողովորդս ընդ այնոսիկ՝ որք են յարենէ և յազգէ մերժէ, բայց սարտուցեալք և հատուածեալք ի մէջ, յաղագս ինչ ինչ վարդապետութեան և մեկնութեան և բացատրութեան ի հաւատս և թէպէտ ի մերոց անտի պատրիարքաց և իշխանաց երբեմն փոյթ տարեալ են յեկեղեցիս մեր մուծանել բուն իշխանութեամբ բառնալ կամելով զերկպառակութիւն ազգիս՝ բայց այնու առաւել և ս զայրացուցեալ էին զխոռովութիւն և զհակառակութիւն՝ վիրօք զվերան բժշկել կամելով ապա ոչ սաստկագոյն գանիցն յաճոխութիւն, ոչ շղթայապինդ բանտարկելութիւնք՝ եթէ և ի զնդան, ոչ պատիժք սքսորանաց ի գժնդակ վայրս՝ ոչ բազմապատիկ տուգանք տուժից՝ այլ և ոչ զանազին պատուհասք կարացին գործել ինչ զօրւտ ազգիս՝ քան մանաւանդ տուգանաց և վնասու եղին պատճառք մեզ, և համարձակութեան առիթք նոցին հատուածելոց և սիրոյ օրինաց մերժումն։ Իսկ յայժմ անակնկալ ժամու, եթէ զիւրք այս հինաւորց հակառակութեան որոմն սկսաւ արմատախիլ լինել, և սիրոյ և խաղաղութեան սերմունք ծաղկիլ և պողպարերել, աւանիկ նշանակեցից յայժմ պատճենի։

«Ապաքեն մինչդեռ բունաւորութիւն ազգին Յունաց և զրիողութիւն որ յաղագս Երուսաղէմի ակներե ցուցաւ՝ ազգն մեր ողջոյն ի խոր խոցեցան և մեծամեծք և փոքունք ի խորհուրդ մտեալ բազմօրեայ քննութեամբ զելս իրացն ինդրէին գտանել։ Իագու՛մք, որք թշնամիք էին իրերաց և ատեցողք՝ մոռացան զայն ամենայն և միարանեցան ի սոյն։ Իշխանապետք մեր առ հասարակ թողեալ զկարեւոր գործս իւրեանց ի մի վայր ժողովէին, յամենայնի խորհրդակից իւրեանց առնէին զերեւելի և զմեծամտն զիշխանս զայնոսիկ, որ ի հատուածելոց անտի էին և եղբայրական սիրով արգահատէին զմիմեանս, ջանալ ճգնել ամենայն յօժարութեամբ ի պարձանս ազգիս և զերծուցանել յարհա-

մարհանաց անտի և մեծարանութեանց Յունաց, Չերկին երբէք ինոսին ցոյցք ասելութեան կամ հատուածման. այլ մանաւանդ ի մի սիրտ և ի մի հոգի համազոյգ են և սանդոյ կամակատար աշխատութեամբս և այնպէս յերկուց կողմանց մի քան զմի առաւելեալ հայրենասէր բարոյիք, յամենայն ատենի գտանէին ի միասին ընդ մերոց իշխանաւորաց և զեզերէին անձանձիր յօժարութեամբ ի զրուսարքունեաց։

«Եւ այսու օրինակաւ օր քան զօր առաւելեալք ներքին հոգևոր սիրով զրոյցս ստէպ ի մէջ արկանէին բառնալոյ իսպաս զկրճիմն հակառակութեան ի միջոյ։ Այն ինչ օգնականութեամբ ծեսուն յաջողեցան իրքն սրբոյն Երուսաղէմի, ուրխտմիտ եղեալ մեծարու իշխանք յերկոցունց կողմանց՝ ասացին նոցա յայտ անել զրով զայնոսիկ բանն, զորոց լինին վիճարանութիւնք։ Եւ նոցա գուժարեալ զկարգաւորս և զիշխանս իւրեանց, և քանի մի տեղիս ժողով արարեալ նշանակեցին ի Թղթի և ետուն իշխանաց մերոց, և էր ինդիր նոցին հընգեքին այսօրիկ։

«Նաս՝ թէ Քրիստոս տէրն մեր ունի զերկուս բնութիւնս և զերկուս կամն և զերկուս ներգործութիւնս։

«Ներկորդ՝ թէ ամենասուրբ Հոգին է ի Հօրէ և յԱրդւոյ։

«Ներորդ՝ թէ սրբոյն հոգիք փառաւորեալք են այժմ՝ և մեզա, որք զատապարտեալք։

«Չորորդ՝ թէ Պետրոս է գլուխ առաքելոց և զնոյն զլիաւորութիւն ունին յաջորդք նորս։

«Հինգերորդ՝ թէ Աւերջին Օծումն է խորհուրդ յեկեղեցւոյ, հաստատեալ ի սրբազան առաքելոյն Յակովբայ։

«Յաւելին յայտոսիկ և վկայութիւնս ի զրոց սրբոց և ի հարց և ի վարդապետաց մերոց, յայտ աննելով, եթէ և զուք ընդունիք զայսուսիկ ամենայն ողջմտութեամբ՝ հաշտեալ միարանիմք և մեք ընդ ազգիս մերոյ, ընդունելով զամենայն ձեւս և զդաւանութիւն և զարարողութիւն առանց յաւելլոյ և նուազելոյ զմի ինչ յընթերցուածոց և յաւանդութեանց Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, ճանաչելով և ընդունելով մեր գլուխ և առաջնորդ և կոտավար զՍրբազան Հայրապետն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, զարժանաժառանգ յաջորդն սրբոյ Հօրն հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։

«Իսկ իշխանաւորք ազգիս հրաւիրեալ էին յառաջագոյն վասն սմին իբի զՎարափրոս արքեպս.՝ն և ժողով արարեալ հեցիցս ի տաճարի մեծի եկեղեցւոյն սրբոյ Էջմիածնի, որ ի Ա. Պօլիսս յորում ներկայ գտանին սրբազան պատրիարքն, և առաջնորդն Զմիւռնոյ Վարափրոս արքեպիսկոպոսն հանգերձ Ստեփան վարդապետիւ, և նուաաստութիւնս և առաջնորդն Թոխատու Երեմիա եպիս-

կողման և Պոլոս փարգապեան վերից սրբոյ Արուսաղէմի և Աւարդան փարգապեան վերիցն Մշու սուրբ Ասրապետի և Տէր Վեսրոպ քահանայն և իշխանք՝ անձինք երեք—Մահատեի Առաքել ամիրայն փաստապետ և Քարապետն և Մասայեան Գրիգոր ամիրայք և ի փարժապետաց՝ Գէորգ զպիր Պայտատեան և Վեսրոպ և Խաչատուր և Յարութիւն և այլ անձինք տասն և ութ։ Աւ քննեալ զայնոսիկ զԼուխս ինդրոց՝ պատասխանի արարաք ոչ յինքնայածար բանից մերոց։ այլ ի գրոց և ի նախնի տօնելի հարց և փարգապետաց մերոց։ հիմն ամենայնի սոցա կղեալ զհանգանակն նիկիական յաւելաք ապա ի քահատութիւն և զհոգեւունջ սրբոյ բանու։

Ան փարգապետութիւն բնութեանցն Քրիստոսի որ է ինդիր առաջին փխտութեամբ սրբոյ Լուսաւորչին և Աթանասի և Պիրղիցոյցար ողջամիտ լինել խոտտովանութիւն միոյ բնութեան մարմնացելոյ բնոյզեմ՝ նետտրի բաժանողի և երկու բնութեանցն անբաժանելի միաբնութիւն ի մի անձն՝ ընդդէմ՝ Աւտիքեայ շիտիոզի . . . . .

Ան երկրորդն՝ թէ Հոգին է ի Հօրէ և յԱրդւայն՝ նոյնպէս պատասխանի արարաք ի բանից Քրիստոսի և սրբոյ Լուսաւորչին և Աթանասի և ողջաց հարց և ցուցար թէւ Հայրն է յանձնէ։ Արդիին՝ ի Հօրէ և Հոգին Աւրբ՝ ի նոցունց էութենէ։ Երպէս փարգապետեաց և ուսոյց հայրն հաստոյ շայտտանեայ սուրբ եկեղեցոյ։

Ան երրորդն՝ թէ սուրբք ի փառս են և ակեղաւորք յանարդութեան և դատապարտութեան պատասխանի արարաք . . . . և ցուցար թէ՛ սրբքդն հոգիք ի փառս են յուսովն իսկ անզեզվ ակեղաւորքն ի պատիժ դատապարտութեան յուսահատութեամբ։

Ան չորրորդն՝ թէ Պետրոս է զխաւոր յառաքեալան և յաջորդք նորին՝ ի հայրապետս պատասխանի արարաք . . . . և ցուցար ամենայն աստեղից ունել քացարձակ իշխանութիւնն նոյնպէս և յաջորդաց նոցին ի վերայ յատուկ ազդի սիրեանց։ ըստ այնմ՝ Աս ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի։ Աստի անկախ զողով ի միմեանց ամենայն յաջորդք աստեղեցոց՝ զնոյն իշխանութիւն և պատիւ ունին։ զոր տունէին նախնիք ի սիրեանց սուրբ աստեղալքն։ ըստ սահմանադրութեան սրբոյ ժողովոյն նիկեոյ և Աստանդնուսոյցոյ։

Ան հինգերորդն՝ որ էր Օծումն Աւրջին՝ Եպատասխանի արարաք թէ վերջին օծումն՝ է խորհուրդ եկեղեցոյ փան որոյ ըստ սրբազան աստեղեկոյն Յակովբայ—Եթէ որ հիւանդանալէ ի մէնջ՝ կոչեմք զերիցունս եկեղեցոյ և աննեմք ի վերայ աղօթս քայց օծանելն ի զով զհիւանդս և ի գործածութեան և չէ հարկաւ որ յոյժ՝ որ

պէս զրէ մեծն Խոսրով ի մեկնութիւն ժամագրքի։

Բնագատը մէջ բերելով այս յայտարարութեան հինգ կէտերն ու նրանց պատասխանը գոչում է — Ապշի արդեօք Ա. Հ. Մ. Զամչեան նոր պաշտպան ուղղափառութեան եկեղեցոյ հայաստանեայց յընթեհունըն զայս սխալ և զայժ ի զայժ զաւանտութիւն զոր չէ տեսեալ և ոչ իսկ զայն ընթերցեալ։ Աստի գիտելով զայս ամենայն և թէ միանգամ յանդգնեցի ընդդէմ այսպիսի ուղիղ և անսխալ վճռոց եկեղեցոյն (հրոսովմեական) մարտել և ընդդէմ զինել այնպիսւոյն միտքն և դիտումն ոչ այլ ինչ երևի և թէ ոչ որոգայթադիր լինել հոգւոց ի քահայիժումն նոցա։ Աստի պարտ է զգուշանալ յայսպիսեաց (Մ վ. Զամչեանից, Պոլոս Թնկերեանից ևն) որոց ջանքն յուսեալ երևի լինել փասն անձնական շահատիրութեան քան թէ հոգւոց փրկութեան քան զոր չէք այլ ինչ թշնամութիւն մեծ և անօրէնութիւն անտանելի։

Բնագատութիւնը բնագատը վերջացնում է միջնադրումն բանից վերտառութեամբ մի յօգուածով՝ որի բովանդակութիւնն է ազացուցանել որ Միթմարեան միարանութիւնը հիմնուել է ուղղափառութեան (հոսովմեականութեան) պատրուակով որսալ ուղղափառներին և դէպի հերձուածողութիւն միմեայի։ հետեւաբար և ասում է։ Ասան որոյ և զտոսա մարթէ համարել իբրև քարոզիչ կամ միսիօնար ընդ դիմակօք ուղղափառութեան՝ ասաքեալ առ մեզ ի կողմանէ հայոց հերձուածողաց (լուսաւորչական)։ Իսկ այս հետեւեցնում է Զամչեանի գրուածքից՝ որին համարում է Միթմարեանների բերան և հիմն որի արտաքինը վարդապետ է անուանում իսկ ներքինը՝ քանդազոչ։ Այս գործողութիւնը նկատ կեղծաւորութեան է կոչում և ոչ նոր և այլ Միթմարի գիւտ իսկ վախճանը՝ անշայն և զուր։ Միթմարի՝ Հոսովմայ գահի առաջ ուղղափառ ձեւանալը և իւր աշակերտներին իւր փարգապետութեանին (երևի լուսաւորչական) կրթելը գիւտ և հնարք կեղծաւորութեան է կոչում։ Բնագատը Միթմարեան ուխտի՝ Հայաստանեայց եկեղեցոյ ջատագով հանդիսանալը ոչսպաս է ուրուագրում։ Սէջ կարաց (Միթմար) ոչ ժուժել առ արտաք ժայթքելոյ զթիւրեալ և զպականեալ հոսս իւրում փարգապետութեան։ զոր ի սրտին զանձեալ ունէր ի վաղուց հետե։ Ասան այնտրիկ անդէն սկսաւ ջատագով ցուցանել զինքն ոչ բանիւ և այլ զրով եկեղեցոյն Հայաստանեայց և հնորս մերենայիլ ոչ անդակ հարաւորութեամբ ունայն պատճառանօք և անտի խորդախութեամբ զի ի պատրանս արկեալ զեկեղեցին ընդհանուր (հոսովմեական) ի վիհս խորդաւանել մարթացի զուղղափառս (հոսովմեական)։ Այս բաները իւր

զինից հնարած չը համարելով այլ Մխիթարեաննե-  
րի գրքերից եզրակացնելով՝ քննադատը յորգորում  
է ողջամիտ ուղղափառներին (հռոմէականներին)  
հաւատ չընծայել այս տեսակ մարդկանց ու նոցա  
խօսքերին անելով. «զի որոց ջանքն և փոյժ են ի  
կործանումն լսողաց զոր ոչ կարեմք ուրանալ, զի  
աչոք բացօք տեսանեմք և տեսեալ իսկ եմք»:

Լ. Պօղոս Թնկրեանի Յայտարարութեան այս  
քննադատութիւնը գրուած է 1815 թուի փետրուա-  
րի 12-ին Կ. Պօլսում. արագրուել է Ս. Էջմիած-  
նի նուիրակ Աստուածատուր արքեպիսկոպոսի սպա-  
սաւոր Յովհաննէս սարկաւազի ձեռքով\* 1822 թ. ին  
մայիսի 22-ին կրկին արտագրուել է Յովհաննէս  
սարկաւազի օրինակից Էսքաքձեան Գրիգոր վարժա-  
պետի հոգունակութեամբ իւր աշակերտ Կարնեցի  
գպիր Սիմոնի ձեռքով Կարնոյ Հայոց մայր դպրատան  
մէջ, 1828 թուին Յունվարի 10-ին:

\* Քննադատութեան առաջին ընդօրինակող  
Յովհաննէս սարկաւազը Էստոնիայումն է, որ  
ծաղկեց 19-րդ դարու առաջին կիսուով և  
իւր ուսումնասիրութեամբ և գրական փաստակնե-  
րով Մայր Աթոռոյս միարանութեան մէջ առաջին  
տեղն էր բռնում, նա 1820 թուին Ազգիանուպոլ-  
սում Սարկաւազ է ձեռնադրում և Ս. Էջմիածին  
վերադառնալով—1826-ին արեւոյ. 1837-ին հաս-  
տատարում է նորհաստատ Սինօզի անդամ իսկ  
1841-ին ձեռնադրում է եպիսկոպոս:

Ներսէս կաթուղիկոսը զեռ Բնասարարայի և  
նոր նախիջեանի Հայոց առաջնորդ եղած ժամա-  
նակ Յովհաննէս կաթուղիկոսի մահից յետոյ կա-  
թուղիկոսական ընտրութեանը գրաւոր կերպով ար-  
ժանաւոր ընտրելի համարում է Յովհաննէս ե-  
պիսկոպոս Էստոնիայումն ար վախճանուել է  
1849 թուին և թաղուել Էսքաքձեան գիւղի եկեղե-  
ցու արևմտեան դրան մօտ:

Յովհաննէս Էստոնիայումն ար վախճանուել է  
Սեղաթեան Գեր. Տ. Արիստակէս Արքեպիս-  
կոպոսը (Յովհաննէս եպո. Էստոնիայումն ար վախճանուել է  
1799 թուին մայիսի 20-ին, 15 տարեկան հասա-  
կում մահել է Մայր Աթոռոս ուսանելու 17 տարե-  
կան հասակում 1816 թուին գնում է Կ. Պօլսի  
Ս. Էջմիածնի նուիրակ Աստուածատուր եպիսկոպո-  
սի ինձամբի տակ հմուտ վարժապետների մօտ կա-  
տարելագործուելու: Արդհետև այդ ժամանակ զեռ  
շարունակում է ինչ հայ լուսաւորականների և հայ  
կաթուղիկոսների միութեան պատճառով եղած ժողով-  
ներն ու բանակցութիւնները և Աստուածատուր եպիս-  
կոպոսը ժողովականներից մէկն էր, բնականաբար  
Էստոնիայումն ար վախճանուել իրրև հոգևորական և հոգևոր գոր-  
ծելին մօտ գանուող անձն հետաքրքրում է ան-  
ցած դարձաններով և 1822 թ. արագրելով յուզ  
ող ինչքին վերաբերեալ լիցիւնսը, ս. Էջմիածին  
վերադառնալիս հետը բերում է. Միութեան խնդի-  
րը երկար ժամանակ մնում է հրապարակի վերայ.  
նրանով հետաքրքրում են երկար ժամանակ. գրա-  
տպարոյցն են այն բազմութիւն ընդօրինակութիւննե-  
րը ինչքին վերաբերեալ լիցիւնսը, որ կան շատ տե-  
ղերում, որնցից մէկն էլ մեր ձեռքի տակ եղածն է:

Պօղոս վրդ. Թնկրեանի յայտարարութիւնից  
երևում է, որ նա մանակցում էր 1810 թուին  
հայ կաթուղիկոսների առանձին կազմած ժողովներին  
որպէս կաթուղիկոս արխիմաքրուում էին կաթուղիկոսների  
պահանջած զիջումները, և հայերի ժողովներին  
չը գիտեմ որպէս ինչ:

Մէջ բերելով Լ. Պ. Թնկրեանի յայտարարու-  
թիւնը, որի մէջ տեսնուք միութեան համար կա-  
թուղիկոսների երկու անգամ առաջարկած հնգական  
կէտերը և Հայոցս պատասխանը, կը յաւելացնելը  
որ, որքան կաթուղիկոսների առաջարկած կէտերի խմբա-  
գրութիւնը կատարուած է վարպետութեամբ, հնար  
եղածին շափ մեղմ, բայց և շատ որոշ, նոյնքան և  
հայոցս պատասխանը զիջող, համակերպելու արա-  
մադիր և թառամատու Աստուածաւորն այն էր, որ  
կաթուղիկոսները յանձին Թնկրեանի իրանց առաջարկը  
այնպէս էին խմբագրել, որպէս թէ Հայոց եկե-  
ղեցին ի սկզբանէ անտի ս. Լուսաւորչոյց սկսած,  
արդէն ընդունած է եղել և ընդունում է:

Աւելուծելը կաթուղիկոսների առաջարկների մի  
երկու կէտը և աշխատելը լրացնել Հայոցս պա-  
տասխանը՝ մեր ընթերցողների մեծամասնութիւնը  
աչքի առաջ ունենալով, որ են քահանաները, որոնց  
մեծազոյն մասը տարրական կրթութիւն միայն ու-  
նի, որ ցաւելով խոստովանում ենք:

Կաթուղիկոսները յանձին Թնկրեանի իրանց  
առաջարկած երրորդ կէտում ասում են, որ  
Հայոց եկեղեցին ընդունել և ընդունում է  
Ս. Լոգոսյ ըղխումն Որդոց, վկայ կոչելով  
Սոյ Գ. ժողովը, որ գումարուեց ըստ Կի-  
րակոս Գանձակեցոյ՝ Հայոց 2. թուին, որ է Փրկչի  
1251. Լեթում թագաւորի և Կոստանդին կաթու-  
ղիկոսի օրով, Հայք 862 թուին գումարուած Շիրա-  
կաւանի Բ. ժողովի այն կէտը ի նկատի ունենալով  
որ ասում է. «դաւանեմք զՀայք՝ անպատճառ և  
զՈրդի՝ ի Հօրէ. և զՍ. Լոգոսի—ի նոցունց կուրենե՛ս՝  
պատասխանում են. «Հայք՝ յանձնէ. Որդի՝ ի Հօրէ  
և Ս. Լոգոսի—ի նոցունց կուրենե՛ս:

Եւթիւն բառը համանիչ է համազոյակից,  
համազոյ: հաւասար բառերին: Ս. Լուրք հոգե-  
մարտնրի հերեւիկոսութիւնը դառապարակելով՝  
Ս. Լոգոսն յատկաբոլորն «համազոյ կամ էակից Հօր և  
Որդոյ» խօսքը, Բայց կաթուղիկոսները իրանց յատուկ  
տրամաբանութեամբ ի նոցունց կուրենե՛ս բառերը  
հասկանում են. «Եւթն կամ բոլորած նրանցից (Հօ-  
րից և Որդոց) (Փարս. վրդ. Աւետիքեան, Էստոնի-  
կանի Բացատրութեան կից Բղիման ճառ երես 727),  
Հայք դիմամբ այդ ձևն էին առել Ս. Լոգոսյ  
բոլորման վերապետութեանը, որ կաթուղիկոսները ի-  
րանց կերպ մեկնելով՝ առարկութիւն չանեն.

Սոյ Գ. ժողովը ազգի լրութիւնից ընդու-  
նում չէ, ուրեմն և նրա սահմանադրութիւնը աչ-

գային եկեղեցու համար պարտաւորական չէ կարելի համարել: Եկեղեցու նախնական սովորութիւնների նախնական Յուրինեան իշխանների տեղը Պիլիկիայում երբ բռնեցին կաթողիկոսական հոգևոյ տոգորուած Զապէլ թագուհին: Նրա առաջին ամուսին օտարազգի ուխտագրութ Փիլիպպոսը և երկրորդ ամուսին թուրքամորթ և մուսուլման Լեթուսը և վերջապէս Լուսինեանները: որոնք հոգւոյ ու մարմնով կաթողիկէին և իրանց նեղութեան մէջ ամեն օգնութիւն պատկէցէին սպասում: պատկէց: որ օգնութիւն խոստանում էր: եթէ միայն հայերը ընդունէին իր գերիշխանութիւնը և լատինական եկեղեցու վարդապետութիւնը: շատ բնական է որ կարող էին Սոյ Գ. ժողովի պէս ժողովակներ: Պատանդին կաթողիկոսի գէպի պապը գրած թղթերի և Վանական վարդապետի մեկնութեան պէս դաւանութեան գրեր տեղի ունենալ և գրուել: բայց դրանք բոլորը ժամանակաւոր բաներ են և անցողական: Այ կաթողիկոսի բարձր կոչումը: ոչ ժողովի հեղինակաւոր անունը և ոչ վարդապետի համարը չեն կարող ընդունելի կացուցանել այն ինչ որ հակառակ է եկեղեցու ընդունած վարդապետութեանը և չէ համապատասխանում եկեղեցու սրբազործուած անդուստիւններին:

Ս. Հոգու՝ Արդուց բղխման վարդապետութիւնը կաթողիկէ եկեղեցու մէջ հին չէ: այլ սկսուել է եօթներորդ դարում և միայն իններորդ դարում պաշտօնապէս ընդունուել որպէս ինչիր հաւատոյ (Բացար: Զարակ. և ճառ Բղխմ. երես 723): Մի վարդապետութիւն: որ իններորդ դարում և լատին եկեղեցում քարոզուել որպէս ինչիր հաւատոյ: սաստիկ ընդդիմադրութիւն յառաջ բերելով յունական եկեղեցու կողմից: հայ կաթողիկէ հարբ ճըգնում են ապացուցանել: թէ ս. Լուսաւորիչ շորորդ դարու սկզբում արդէն ընդունում էր և անագ է թողել հայ եկեղեցուն: Խորենացին այս գէպքում կատեր: Ա՛յ կարի է առասպելս:

Հայաստանեայց Ս. եկեղեցին Ս. Հոգւոյ նշանն այնպէս է ընդունում: ինչպէս ասանգել է Փրկիչը. «Հոգին ճշմարտութեան» որ ի Հօրէ ելանէ: (Յովհ. աւետ. ՓՆ. 26): և ընդունել է որպէս մասն հաւատոյ: հիմն ունենալով Ս. Պաւլոյ և ժողովի սահմանադրութիւնը: որով հոգեմարտների հերետիկոսութիւնը հերքելու համար հանդանակի մէջ աւելացու («Հաւատամք») և ի Հոգին սուրբ: զոր և կենդանաւոր: որ ի Հօրէ ելանէ: որ ընդ Հօր և ընդ Սոցոյ երկուսուց ինն անու և ի սուսանոյ: որ խօսեցաւ մարգարէիք:» (Հանգանակ Հաւատոյ: որով վարի Հայաստանեայց եկեղեցի. քննութիւնգրից Լ. Յովսէփ վ. Գաթրճեան. Վիեննայ. 1881 եր. 80):

Թէև մեր հանգանակի մէջ: որ նիկիականն է

(անեշան բացատրական բառերի յաւելացմամբ) Ս. Հոգու ելման մասին բան չը կայ: բայց ժամագրքի սկզբում գրուած հաւատոյ խոստովանութեան մէջ կարգում ենք: «Հաւատամք զսուրբ Հոգին՝ անեղ: անժամանակ: ոչ ծնեալ: ոչ յղխանոյ ի Հօրէ: Էակից Հօր և փառակից Արգւոյ»:

Նոյն ժամագրքի Արևադալից երգերի մէջ «Ի Հօրէ յղխանոյ Հոգի աղբիւր բարութեան»:

Զարականի մէջ շատ տեղեր ի միջի այլոց Հոգեգ. Գ. աւուր հարցի 1 տուն. . . . «Հայր անծին և անսկիզբն: Արգւոյ պատճառ՝ անժամանակ ծնեղեամբ և Հոգւոյ յղխան՝ անքննաբար: այսինքն «Հայր անծին և անսկիզբն» (որ) պատճառ ևս Արգւոյ՝ անժամանակ ծնեղեամբ և Ս. Հոգու բղխմանը՝ անքննաբար»:

Ս. Ներսէս Ընդհային և ս. օրին հայ կաթողիկէները անվիճելի հեղինակաւորութիւն են համարում ի միջի այլոց երգում է.

«Աստուած անեղ: անժամանակ: Հայր անսկիզբն և անքանակ»:

Արգւոյ պատճառ՝ ծնեղեամբ անճառ Հոգւոյն յղխմամբ անքննաբար» որ վերելին բառացի կրկնութիւնն է:

Ամենասուրբ երրորդութեան այս դաւանութեան վերայ հաստատ մնացին և մնում են արևելեան եկեղեցիները (Հայոց: Յունաց և ընդ): իսկ Լատինաց եկեղեցին Ս. Հոգու վերաբերութեամբ շեղուցի: և արդարանում է Յիսուսի խօսքով թէ: «Յիմէ անտի առնուցու և պատմեցէ ձեզ» (Յովհ. աւետ. ժԶ. 14): զոնէ Լ. Գարբէլ վ. Աւետիբեան:— որ Վենեակում 1800 թ. դուսարուած կարգիւնների յանձնարարութեամբ գրել է «Զարականի Բացատրութիւնը»: կաթողիկոսական սոգին հայ եկեղեցու մէջ մուծանելու նպատակով:— այսպէս է գրում իւր բղխման ճառի մէջ.

«Յիմէ անտի առնուցու և պատմեցէ ձեզ» Թրմէ ձեռնարկեն աստուածաբանք: թէ Հոգին սուրբ հարկաւ պարտի կլանել նաև յԱրգւոյ: վասն զի անուել ինչ յԱրգւոյ անմարթ էր Հոգւոյն սրբոյ առանց կլանելոյ ի նմանէ» (երես 754):

Ասողջ բանականութիւնը «Յիմէ անտի առնուցու և պատմեցէ ձեզ» խօսքից չէ կարող կարակացնել «ելումն Ս. Հոգւոյն յԱրգւոյ» նախ որ Յիսուս ապագայի մասին է խօսում: մինչդեռ Ս. Հոգին համագոյ է Հօրը և Արգուն: ուրեմն յառաջ քան զամենայն յախտեանս կլանէ ի Հօրէ: երկրորդ՝ որ Յիսուսի ասելը թէ նա զիս փառաւորեցէ: զի «Յիմէ անտի առնուցու և պատմեցէ ձեզ»: պէտք է հասկանալ՝ նա ինչ պէտք է փառաւորի որովհետև իմ (գործերից) պէտք է անի ու պատմի ձեզ: Սակայն կաթողիկէ աստուածաբանները Սուրբ Գիորջը մեկնելու իրանց յատուկ եղանակն ունեն: որով կարող են ամեն միտք յեղաշրջել այնպէս՝ ինչպէս իրանք են կամենում:

Ի մի րան. Հայոց եկեղեցին Փրկչի խօրքի համեմատ գաւառում է. Հոգին Ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ. այլ կերպ վարդապետութիւն չէ ընդունել, չէ ընդունում:

Գաւառութեան վերաբերեալ խնդիրներում, ուր հաւատն է միակ տեղ բնորդը, վիճող կողմերի մէջ իր աւխտհոյութիւնն ու համաձայնութիւնը անիրագործելի երեակայութիւններ են: Հաւատոյ խնդիրներում հարկուոր է հաստատ համոզում՝ թէ գաւառած ճշմարտութիւն է. և անվիճե- բութիւն՝ այդ ճշմարտութիւնը պաշտպանելու:

Կաթողիկոսներն իրանց առաջարկութեան ա- կեառում ասում են որ Հայաստանայց եկեղեցին ընդունում է ո. Պետրոսին զլուխ ո. Հաւատոյ հիմն ո. եկեղեցոյց հեանարար և նրա յաջորդ- ներին փակագծի մէջ ասենք Հոսովմոյ պապերին, ճանաչում է հաւատոյ և բոլոր քրիստոնէական եկեղեցիների զլուխ. և այն՝ սկսած որպէս թէ ո. Լուսաւորչից:

Միութեանները սկսած Միութեար Երբայից մինչև այսօր անհուն աշխատանք են գործ դրել և անհամար գրքեր հրատարակել ապացուցանելու թէ Հայոց եկեղեցին ընդունել և ընդունում է պապի գերիշխանութիւնը և հաւատոյ խնդիրներում համընթաց է եղել հոսովմեական եկեղեցուն, Նթէ այդպէս լինէր՝ այն ժամանակ էլ ինչ կարիք կար միութեան խնդիր յարուցանել և միանալու համար պայմաններ առաջարկել: Բայց բարեբաղդարար այդպէս չէ. մեր եկեղեցին չէ ընդունել պապի գերիշխանութիւնը և այդ բանի շնորհիւ ինքնիշ- խան եկեղեցի է մնացել. գաւառութեան խնդրում համընթաց չէ եղել կաթողիկոսականին և այդ բանի շնորհիւ էլ ինքնուրոյն և ազգային եկեղեցի է մնացել:

Կաթողիկոսները պնդում են որ ինչպէս ո. Պետրոս առաքեալը զլիաւորութիւն ունէր առա- քեալների մէջ, այնպէս և նրա յաջորդ պապերը գերիշխանութիւն ունեն քրիստոնէական եկեղեցու մէջ: Այս առաքելութիւնը որքան հին և անհիմն է նորքան և յամասութեամբ կրկնվում և նոր է մնում կաթողիկոսների մէջ, նոր Կառկարանի մէջ ո. Պետրոսի զլիաւորութեան մասին խօսք անգամ չը կայ, բայց նրա վաղվաղիտ յատկու- թիւնը շատ անգամ է շեշտուած: Եթէ կայ մի ամտոս որ պէտք է պարծենար ո. Պետրոսի ա- նունով՝ այդ Ամտոսի պատրիարքական ամտուն է որովհետև ո. Պետրոսը յիրաի այնտեղ եղել է, սակայն նրա գործունէութիւնը այնտեղ երկգիծի է եղել և ո. Պոզոս առաքեալը հետևեալ տխուր Դու- ներով է նկարագրում այդ:

«Այլ յորժամ եկն ղեփաս յԱմտոս, ընդ- ւզեմ գարձայ նորա քանցի զօգ սոցեալ իմն էր: Բանդի, մինչ չև եկեալ էին օմանք առ ի Յակով-

բայ՝ ընդ հեծանոսս ուտեր անխոր. իսկ իբրև «եկին» գաւառէր և որոշէր զանձն, երկուցեալ «յայցանէ» որ ի թլիփատութենէ անտի էին և «կեղծաւորեցան ընդ նմա և այլ հրեայք»: (Մառտ. Ի. 11—13. տես և շարունակութիւնը):

Յիսուս աշակերտների անունները թուելիս յիրաւի ո. Պետրոսի անունը առաջ է յիշում. բայց այդ ապացոյց չէ թէ ո. Պետրոսն առաւելու- թիւն ունէր առաքեալների մէջ: Եթէ կայ մի տեղ, ուր աւելի է պահում աւագութեան կարգը, այդ հանդիսաւոր տեղերում բաղմկու ժամանակն է:

Բաղարջակերոց տանին՝ թէ Խորհրդական Ընթրիքին և թէ Առնալուսայի ժամանակ չէ երևում որ Յիսուսից յետոյ առաջին տեղը ո. Պետրոսը զբաւած չիւնէր. որովհետև Առնալուսայի վերաբե- բութեամբ ո. Աւետարանի մէջ կարգում ենք. «Յառ- նէ (Յիսուս) յընթրեացն անտի և զնէ զհանդերնն, և առեալ զննջակ մի սփածաւ: Աւ ապա առեալ ջուր արկ ի կոնք և սկսաւ լուանայ զոսո աշակեր- տացն և արէր զննջական: զոր սփածեալ էր. գայ առ Սիմոն Պետրոս և նն (Յովհ. աւետ. ԺԳ. 4—6), Արեմն աշակերտներից մի քանիսի ոտքերը լուացել ու սրբել էր՝ երբ եկաւ Պետրոսի ոտքերը լուալու: Ընթրիքի ժամանակ էլ երևում է որ ո. Պետրոս Յիսուսից բաւական հետի և Յով- հաննէի զիմացը կամ կողքին նստած պէտք է լինէր. որովհետև երբ Յիսուս յայտնում է թէ աշակերտներից մէկը պէտք է մատնի նորան՝ աշակերտները տարվուած նայում են իր- ր և ո. Աւետարանը ասում է. «Աւ էր մի օմն յառա- կերտացն բաղմեալ առ Յիսուսիս. զոր սրբէրն Յի- սուս: Ակնարկէ նմա Սիմոն Պետրոս հարչանել, թէ ո՞վ իցէ վասն որոյ առնն» (Յովհ. Աւետ. ԺԳ. 23—25): Այս հատուածից երևում է որ Պետրոս Յիսուսից ոչ միայն հետի էր բաղմած, այլ համար- ձակութիւն անգամ չուներ կամ չունեցաւ ինքն հարցնել:

Յիսուսի աշակերտները բոլորն էլ հաւասար էին և նրանցից ոչ ոք իշխանաւորութեան մարդ անուած առաջնութիւն չուներ ապացոյց, երբ որ Զերեբեթայի որդւոց մայրը իր որդւոց հետ մօտե- ցու Յիսուսին խնդրելու, որ իւր այդ երկու որ- զիններից մէկին ալ և միսին ձախ կողմը նստեցնի՝ Յիսուս յանդիմանական ձևով նկատեց. «Ոչ զիտէր զինչ խնդրէր: Աշակերտներն էլ բարկացան այդ երկու եղբայրների վերայ, որոնց Յիսուս իւր մօտ կանչեց ու ասաց. «զիտէր զի իշխանք ազգաց տի- բնն նոցա: Ոչ այնպէս իցէ և ի ձերում միջի, այլ որ կամիցի ի մեկը մեծ լինել կոյցի մեք պաշտօնեայ. և որ կամիցի ի մեկը առաջին լինել կոյցի մեք ծառայ...» (Մատ. Ի. 26—28):

(Յիսուս) երբ իւր շարքարանքի և մահուան մասին էր խօսում՝ աշակերտները վիճում էին իրար

Հետո թէ այնուհետեւ իրանց միջից ո՞վ կը լինի մեծը. ս. Աւետարանն ասում է.

«Յիսուս կոչեաց զերկուսասանն և ասէ ցնոսա եթէ որ կամի առաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտսեր և ամենեցուն պաշտմանայս. Մարկ. Թ. 35:

Ս. Ղուկաս աւետարանիչը առաքեալների մեծութեան մասին ձգտումն այսպէս է արանգում. «Եւ եզև հակառակութիւն ի մէջ նոցա թէ ո ի նոցանէ համարեցի մեծ. Եւ նա (Յիսուս) ասէ ցնոսա... որ մեծն է ի ձեզ, եղիցի իրրև զկրտսերն, և առաջնորդն՝ իրրև զպատարնս: ԻԲ. 24—28:

Այս բոլորից երևում է, որ ս. Աւետարան առաջնութիւն կամ մեծութիւն չունէր. եթէ ունենար, ամենեւն այդ մասին էլ վէճ չէր ծագի. բ) որ առաքեալների մէջ մեծը չը կար և Յիսուս միշտ գատապարտում էր առաքեալներից մէկի կամ միւսի մեծ լինելու կամ կոչուելու ձգտումն (Ղուկ. Թ. 46—48) և նրանց մէջ հաւասարութեան գաղափարը հաստատել կամենալով՝ ասաց, զի ուսիցէք և ըմպիցէք ի սեղան իմ՝ յարբայութեան իմում և նըստիցիք յեկեղատան արու գատել զերկուսասան ազգն Իսրայէլի (Ղուկ. ԻԲ. 30): Լեռնաբարս. Աւետրոս իւր ընկեր առաքեալների հետ հաւասար աթոռ նստելով ոչ ինքն իրաւունք ունի նրանց գատելու և ոչ նրա յաջորդ կոչուելու փոքրն ունենալ ձգտող Հոռովայ եպիսկոպոսները իրանց հաւասարապատիւ այլ եկեղեցիների եպիսկոպոսներին: Այսպէս ս. Աւետրոսի մասին. այժմ՝ զանք նրա յաջորդ կոչուող Հոռովայ պապերին, թէ նրանք առաջնութիւն ունեցնէին:

Ս. Գրքից յետոյ քրիստոնէական եկեղեցու մէջ առաջին տեղը բռնում են տիեզերական ժողովների կանոնները մի կողմը թողնելով բոլոր հին և նոր աստուածաբանների գրուածքները, զիմենք այդ ժողովներին:

Առաջին երեք տիեզերական ժողովներից 325 թուին գումարում են ինկիոյ տիեզերական ժողովում նախագահում էին Անտիոքի Եւստատիէոս և Աղէքսանդրիայի Աղէքսանդր եպիսկոպոսները (Բորեթոսն Եկեղ. Պատմ. I. հատ. էր. 190. և ուս. թարգ.):

381 թուին գումարում Կ. Պոլսոյ Ա. տիեզերական ժողովում նախագահում էին սկզբում՝ Անտիոքի եպիսկոպոս Մելիտոսը և ապա Գրիգոր Աստուածաբանը (Նոյն հատ. 247):

431 թուին գումարում Եփեսոսի Տիեզերական ժողովում նախագահում էին՝ սկզբում՝ Աղէքսանդրիայի եպիսկոպոս Կիւրիլը և ապա Երուսաղէմի եպիսկոպոս Յորնաղը (Նոյն հատ. 417—421):

Թէև այս ժողովներում պապական աթոռը ունեցել է իւր ներկայացուցիչը, բայց տեսնում ենք, որ ուրիշներն են նախագահում:

Այս արդէն յայտնի ապացուցանում է, որ Հոռովայ եպիսկոպոսները բացի իրանց վիճակում եկեղեցուց, այսինքն կաթոլիկականից, քրիստոնէայ այլ եկեղեցիներին մէջ ոչ մի գերիշխանութիւն չեն ունեցել և չունեն:

Աթոռիկ Հ. Պոլոս Թնկրեանք իւր առաջաբովութեան շորրորդ կէտում ասում է. եկեղեցին Հայաստանեայց ընդունել է և ընդունում է այս Յշմարտութիւնը, թէ քրիստոնէաներից արրութեամբ մեռնողների հոգիքը գնում են ուղղակի արքայութիւն, մահացու մեղքերով մեռնողների հոգիքը իջնում են դժոխք, իսկ ներելի մեղքեր ունեցողների հոգիքը, որոնք ժամանակ չեն ունեցել վճարել իրանց թողած մեղքերի կամ ներելի յանցանքի պատիժը, գնում են մի տեղ, այնտեղ ներութիւն և անձկութիւն են կրում. բայց կենդանիների աղօթքների, պատարագների և ողորմութիւնների ձեռքով ներումն են գտնում և պայմանեալ ժամանակը լրանալուց յետոյ գնում են արքայութիւն: Իսկ հայ կաթոլիկները իրանց առաջաբովութեան երրորդ կէտում նոյն իմաստով կրկնում են. թէ սրբերի հոգիքը փառաւորում են այժմ և մեղաւորներինը գատապարտում:

Հայք պատասխանում են. սրբերի հոգիքը փառաւորում են յուսով, իսկ սնցեղջ մեղաւորները գատապարտութեան պատժի մէջ են յուսահատութեամբ:

Աթոռիկները ընդունելով որ սրբերի հոգիքը փառաւորում են այժմ և մեղաւորներինը գատապարտում, կողմնակի կերպով հերքում են Աւերջին Գատաստանը, որ պէտք է լինի մեռնողների մարմնով յարութիւնից յետոյ, ուրեմն հերքում են Քրիստոսի Երկրորդ Գալուսաը. որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսը պէտք է զայ գատելու հոգիք և մարմինները և նրանց գործքերին համեմատ հատուցումն տալու:

Մեր եկեղեցին դաւանում է այն ինչ որ հաւատոյ հանգանակը ուսուցանում է, որ է. Գալոց է նովին մարմնով և փառք Հոր ի գատել զկենդանիս և զմեռեալս, սրոյ թաղաւորութեան ոչ զոջ վախճան... (Հաւատամք) ի յարստիւն մտելուց, ի դաւառան յարիւնից հոջուց եւ մարմնուց յարստարիւն երկից եւ ի կեանս յարիւնեականս:

Հայաստանեայց ս. եկեղեցին հաւատում է Յիսուսի Երկրորդ Գալուսեանը, որովհետեւ Ս. Աւետարանն ասում է. «Եւ յորժամ եկեղեց էրդի մարդոյ փառք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց և ժողովացին առաջի նորա ամենայն ազգք... Մատթ. ԻԵ. 31—32, Ս. Գրքի մէջ այս մասին բազմաթիւ վկայութիւններ կան:

Յիսուսի Երկրորդ Գալուսեան ժամանակը որոշում չէ և Աշակերտները հարցնում են. «Զինչ

նշան իցէ քրոյ գոյտեան և վախճանի աշխարհիս։  
 Յիսուս պատմելով իւր վերջին զաշտեան յառաջ-  
 քննեաց նշանները՝ առում է. «Բայց վասն աւուրն  
 այնորիկ և ժամու ոչ որ գիտէ։ ոչ հրեշտակք  
 երկնից և ոչ Արդի քայց միայն Հայրս (Մատթ  
 ԻԿ. 36)։ որպէս զի մարդիկ ամեն վայրիեան մա-  
 Տը աչքի առաջ ունենան և միշտ զգաստ լինեն  
 մեղքեր գործելուց։ որ մաՏը նրանց մեղքի մէջ  
 եղած ժամանակը վրայ չը հասնի. որպէս զի մա-  
 Տուան երկնիցի տակ անգործ չմնան այլ միշտ  
 իրանց արգար վաստակով և աշխարհաշինութեամբ  
 ու Աստուծոյ անունը փառաւորելով պարպին՝  
 որպէս թէ յաւիտեան ապրելու են։ Արթնուն կա-  
 ցէք։ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ  
 ... վասն այնորիկ և զուք եղբրուք պատրաստ զի  
 յորում ժամու ոչ ակն ունիցիք։ գայ Արդի մար-  
 քոյ։ Մատ. ԻԿ. 42 և 45։

Մեր ս. եկեղեցին հաւատում է և Մեռելոց  
 Յարութեանը, Աւերջին Քառասանին և գործոց  
 համեմատ հասուցմանը որովհետև Ս. Գրքն ասում է.  
 «Զի պարտ է ապականութեանս այսմիկ զզնուլ  
 զանապահանութիւն և մահկանացուիս այսմիկ զզն-  
 նուլ զանմահութիւնս. Ա. Կորնթ. ԺԵ. 53։

«Եկեցե՛ք ժամանակ՝ յորում ամենեքինս որք  
 ի գերեզմանս կայցենս լուիցեն ձայնի նորս (Յի-  
 սուսի) և եկեցին սրտաքս. որոց զսրիս գործեալ  
 իցէ՛ ի յարութիւն կենաց և որոց զչար արարեալ՝  
 ի Յարութիւն Քառասանաց» (Յովհ. աւետ. Ե.  
 28—30)։

«Զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով  
 զոր ինչ գործեաց յառաջ. եթէ բարի և եթէ չարս.  
 Բ. Կորնթ. Ե. 10։

Հայաստանեայց ս. եկեղեցին աղօթում է կեն-  
 զանիների և ննջեցեաց համար, որ Յիսուս նրանց իւր  
 գթութեան արժանացնի իւր Երկրորդ Քաշտեանը  
 ներումն շնորհելով նրանց ներելի մեղքերին և  
 հաւատում է, որ իւր աղօթքը լսելի կը լինի. «Բով-  
 հետև ս. Գրքն ասում է. «Եթէ որ տեսցէ զեղբայր  
 իւր մեղուցեալ ի մեղս որ ոչ առ ի մահ (ներելի)՝  
 խնդրեսցէ և տացէ (Աստուած) նմա կեանս մեղու-  
 ցելոյն ոչ առ ի մահ. (Յով. Ա. Թուղթ Վաթնուղի-  
 կեաց Ե. 16). «Եւ աղօթն նուստով վրկեսցէ զաշխա-  
 տեալն և յարուցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ  
 իցէ գործեալ, թուցի նմա Կթղ. Բ. Յակ. Ե. 15։

Արեւմն այս մասին ևս Հայաստանեայց եկե-  
 ցիցին համընթաց չէ կաթողիկոսականին.

Բայց մենք դառնա՛ք մեր բուն խնդրին.

Հոռովեական հայերի և Երբայեան կրօնաւոր-  
 ների Հայերիս հետ միանալու խնդրի վախճանը պար-  
 զելու համար ներելի լինի ինձ ձեռագիրներն յի-  
 շատակարաններից շեղուս շարունակել, Երբայեան  
 միաբանութեան հիմնադիր Միխիթար Սեբաստացու

նպատակն էր ըստ երևոյթին անձուէր ոգով ծա-  
 աայել Հայոց լուսաւորութեան գործին մի և նոյն  
 ժամանակ չը մոռանալով կաթողիկոսութիւնը մու-  
 ծանել մեր եկեղեցու մէջ, Հարկ եղաւ նպատակին  
 հասնել Հայաստանից գուրս սպասանորսն վնասու-  
 լով Այդ սպասանարանը Ա. Ենեպիկ և իւր ս. Ղա-  
 զար կղզին գործան, Միխիթար Սեբաստացին Հայաս-  
 տանից և Հայաստանեայց եկեղեցուց գուրս Ա. Ե-  
 նեպուսի Հոռովեական պապի իրաւասութեան տակ  
 սկսեց գործը։

Սկզբում՝ Միխիթար և իւր արբանեակները  
 ձեացնում էին թէ կաթողիկոսութիւնը մի պատը-  
 բուակ է. որի տակ նոքա կարողանում են ազա-  
 տօրէն հայ գրականութիւնը ծաղկեցնել, Այդ ժա-  
 մանակ ազգը մեծ համարում ունէր զոցա վերայ  
 և նախնեաց մատենագրութիւնները հրատարակելու  
 համար ոչինչ չէր խնայում Միխիթարեաններն,  
 Բայց հետզհետե պատրուակը դարձաւ նոցա  
 համար խկական նպատակ և նոքա սկսեցին կր-  
 նական զրքեր հրատարակել՝ ջանալով ապացուցանել  
 հոռովեական պապի գերիշխանութիւնը քրիստոնեայ  
 բոլոր եկեղեցիների վերայ և մեր ս. Հարց զրուածք-  
 ները կրկնել՝ հաստատելու որ Հայոց եկեղեցին ևս  
 ընդունել է այդ սկզբունքը և հոռովեական հայ-  
 բապտիստներն ձանաչել է Հայոց եկեղեցու վերայ  
 իրաւասուս նոքա ջանք էին անում հաստատել  
 Հայոց եկեղեցու ուղղափառութիւնը ապացոյցներ  
 յիբրեւելով թէ Հայոց եկեղեցին վիճելի կէտե-  
 բում արգէն ընդունել և ընդունում է հոռովեա-  
 կան եկեղեցու դաւանութիւնը։ Այս խկ նպատա-  
 կով կազմուած են Շարականի բացատրութիւնը և  
 նոյն ինքն հանդուցեալ Միքայէլ վարդ. Զանչեանի  
 Առհան հաւատոյ մտեանը՝ որ այնքան խօսակցու-  
 թեանց առիթ եղաւ։

Ժամանակը հետզհետե փոխել տուեց Միխի-  
 թարեաների այդ ուղղութիւնն էլ. նոցա աժման  
 ուղղութիւնը ըստ բաւական պարզել է հանդու-  
 ցեալ Պարթէէլ Արքեպիկ. Այվազեանը իւր «Աւ-  
 բուագիմ Միխիթարեան միաբանութեան» և՛ «Միխի-  
 թարեանց երազոյոյս մէկ կարծեացը քննութիւն»  
 զրքոյկների մէջ՝ որ հրատարակուած են Բազմավե-  
 պում եղած Հ. Աւետիկ Ալիշանի մի գրուածքի ա-  
 ռիթով։

Երեսուցէմի ս. տեղեաց պաշտպանութիւնը  
 միայն առիթ էր. Միութեան խնդիր խեղապէս հե-  
 տեանք էր Օսմանեան կառավարութեան խստու-  
 թեանը զէպի հայ կաթողիկոսները, Օսմանեան կա-  
 ռավարութիւնը ազգայնա ճանաչում է հպատակ  
 ազգերի հոգևոր գլուխներին։ Իրիս այդպիսի՝ ճա-  
 նաչում էր Յուեաց պատրիարքին օրթոդոքս եկե-  
 ղեցիների համար և Հայոց պատրիարքին՝ ոչ—որ-  
 թոքոքս եկեղեցիների համար, Ասթուրիկ հայերը  
 կրօնական յարաբերութիւն ունենալով լատինների

Հետո որ օտար էին օսմանն տերութեան մէջ յաճախելով լատինների եկեղեցիքը, և կամ իրանց համար անային եկեղեցիներ յարգարելով՝ օրինազանցութիւն էին անուսու ուստի և հալածանքի էին ենթարկուում կառավարութեան կողմից: Այս հալածանքից պատուելու համար կաթողիկոս հայերը արտարուստ արածագրութիւն էին ցոյց տալիս միանալ հայ եկեղեցու հետ: դժբաղդարար Միսիթարեանց գձած ծանապարհն ընտրելով, նրանք կամենում էին մտնել հայ եկեղեցին իրանց հետ մուծանելով և կաթողիկոսութիւնը և յաւակնութիւն անկախութիւնը: որ հայ եկեղեցին զիջումներ անի՝ յայտնելով իւր ձեւերից ու արարողութիւններից մի քանիսը, և հաւատոյ զաւանտութեան մէջ ժաւանի այնպիսի փոփոխութիւններ, որ բոլորովին հակառակ էին հայ եկեղեցու ասանգութիւններին և սրբազորութեան փարպապետութեանը: Ասեմովիկ հայերը կամենում էին մտնել հայ եկեղեցին հոռուակամ կանոններով հակառակ օրոսական առանձին օր ստում է սիր կանոններով ուրիշ վանք չէ կարելի մտնել:

1810 թուին Միսիթեան գործի գլուխ անցած էր Յովհաննէս պատրիարքը, իսկ աշխարհականներից՝ արքունի վաստակետ մահտեսի Առաքել (Տատեան): Գրիգոր Չիրակեան և Գրիգոր Սախայեան ամիրաները: Զիջումներ անելուն բացարձակապէս հակառակում էին Երեմիա Եպսոբ (Եւգենիայի առաջնորդ) և Զարարիա փարպապետը, որոնց ձայնը արձագանք գտաւ առաջադեմների և ժողովրդի մէջ և զիջման տրամադրութիւնը առ ժամանակ մի առ կտա մնաց:

Արրահամ պատրիարքի օրով 1-13—15 Միսիթեան խնդիրը ընթացք չունեցաւ: 1815 թուին նրասաղէկի վերել Պօղոս եպսոբ պատրիարք ընտրուելով՝ նորից սկսեց յառաջ մղել Միսիթեան խնդիրը: որովհետև հասմէական հոգեորականները, օգտուելով օսմանն ծանայութեան մէջ գտնուող հայ կաթողիկոսի աջակցութիւնից, չէին գուրում հակառակութիւն սերմանելուց և տկարամիտներին որսալուց: Պօղոս պատրիարքը 1816 ին նոյեմբերի 23-ին պատրիարքարան է կոչում հայ մեծամեծներին և կաթողիկոսներից Տիւրքեան Գրիգոր Զէլէպիյին: Արիկեան Պօղոսին, Աստուածատուրեան Մատթէոսին, Տառնուսեան Ամասին և Թնկրեան Յովսէփին, ու առաջարկում որ այդպէս երկպառակութեան առաջքը տանելու համար հնար մտածեն, ժողովականները որոշեցին զրել ամեն տեղ, որ սիրով փարսեն սակայն ի զուր: կաթողիկոս հոգեորականների օտնդութիւններին անհնարին եղաւ սահման գնել: Պատրիարքը 1817 թուին մայիսի 23-ին նորից պատրիարքարան կոչեց հայ կաթողիկոսների մեծամեծներին, որք էին նոյն Գրիգոր Զէլէպի Տիւրքեան, Կարնեցի Մատթէոս Աստուածատուրեան, Աման

Խրլճեան և Յակոբ Թնկրեան: և ցոյց տուեց նրանց կաթողիկոսների ազգայնաս գործերի մասին եղած զանգատների լմզմէրը: 1817 թուի հոկտեմբերի 12-ին Պօղոս պատրիարքը հայ լուսաւորչական և հայ կաթողիկոս մեծամեծներին նորից ժողովի հրաւիրեց: դարձեալ որոշուեց, որ երկու կողմից էլ գիտնական անձինք ընտրուեն: վիճելի կետերը բնեն, սուրը հարց վկայութեամբ յերևան հանեն ճշմարտութիւնը, և այդ ճշմարտութիւնն ընդունեն միայն յօժարութեամբ որպէս հիմն միութեան: ժողովը զիտնական անձանց ընտրութեան համար քան որ միջոց որոշեց, Այս որոշումն կատարելու համար Պօղոս պատրիարքը հրեք օրից յետոյ հայ լուսաւորչական հոգեորականներից և աշխարհականներից առանձին ժողով կազմեց: ժողովը որոշեց ա) վիճելի կետերի համար իրրև ուղեցոյց ընդունել Աստուածաշունչը, ժամագիրքը, Էարեկանը, Կորհրդաւերը, ձաշոյն ու Մաշտոցը: ս Լուսաւորչի գիրքն ու ներսէս Էնորհալու Ընդհանրականը, բ) վիճելի կետերը բնելու համար ընտրել նրասաղէկի նուիրակ Մարկոս արքեպիսկոպոսին, Կարապետ եպսոբն (Մշոյ ս Կարապետի վերել): Աւարուս վրդին, Բուժխափուի ամտուակոյ Տ. Մեսրոպին: Կ. սկիւտարի ամտուակալ Տէր Բարգուզիմէոսին, Պատրիարքարանի վարժապետ Թագարին, Աւալթիոյ Տէր Զարարիային և Պատրիարքարանի տիրացու Գրիգորին: Պօղոս պատրիարքը ժողովի այս որոշումն հաստատեց նոյն թուի նոյեմբերի 22-ին առան կոնդակով:

Սակայն կաթողիկոսների կողմից ոչ մի հոգացողութիւն չեղաւ: որովհետև նոցա հոգեորականները խուսափում էին հայերի հետ օրեւ յարաբերութիւն ունենալուց, Նրբ այս իմացաւ պատրիարքը, նոյն թուի դեկտեմբերի 12-ին վերջին ժողովը կազմեց, որին ներկայ էին կաթողիկոսներից յիսուն հոգի: Պատրիարքը յայտնում է ժողովին գործի զրութիւնը: Կաթողիկոսները արգարացի են գտնում պատրիարքի ասանները, և թուով 300 հոգի գնում են գէպի լատինաց ս Երրորդութիւն եկեղեցին և կոչում իրանց կարգաւորներին: բայց սոքա փոխանակ զալուս գրգում են լատին կրօնաւորներին ժողովածներին գուր վարել, որպէս խոստարանների: Կաթողիկոս կարգաւորները այսքանով շրտականացած՝ լատին կրօնաւորների զրգոմամբ գիտում են կառավարութեանը ասելով՝ թէ հայք ժողով անելով յարձակուել են լատին եկեղեցու վերայ և այժմ մտադիր են դեսպանատան վերայ ևս յարձակելու: Առավարութեան պաշտօնեան հաւատալով նրանց, զիշերը բազմամիւս զօրքով գալիս է Եւրայի ս Երրորդութեան եկեղեցին, բայց ոչ ոք չգտնելով հետանում է: Միսիթեան գործը դարձեալ խափանվում է, բայց և շուտով վերսկսվում:

Տաճկաց կառավարութիւնը մի կասկածի առիթով փոշերանոցի տեսուչ Տիւղեաններին և նրանց ազգականներին աները խուզարկելիս՝ գտաւ մատուցներ և եկեղեցական սուրբ անօթներ Թայօնի եղաւ որ նրանք առ երեսու գտնուելով հայոց պատրիարքի իրաւասութեան տակ՝ բոլորովին պլլ գաւանդութիւն ունենալ:

Առաւօրուութիւնը սկսեց հայաձանք հայ կաթողիկոսներին դէմ 1819 թուի սկզբներում՝ յամառներից երկուսին զխառնեց և երկուսն էլ իրանք իրանց տան լուսամտից կախուելով՝ խեղդամահ եղան. շատերն էլ արտուեցին: Այս հալածանքի պատճառով նորից երևան եկաւ Միութեան խնդիրը: Եւ խորութեան ինչ ինչ կէտերը քննելու համար նորից սկսուեցին ժողովներ կազմուել, որ անեց Ծննդեան Աւթօրէքից մինչև Վ. ազ. Չորեքշաբթի որը. ժողովակներն էին հայերից՝ Խաւթարուի Տէր Մեսրոպ գիտնականն ու Իւսկիւտարու Տէր Բարդուղիմէոս քահանայները և Թագաւոր փարձապետը. կաթողիկոսներից՝ Հ. Մեսրոպ Աղաչարդեանն և Թոմա Մարտիկեան և Սերոբէ Զեփահիքեան: Ժողովներին նախադասում էր Ստեփան եպօ. Աւգերեանը, որ իւր հեղինակութեամբ վիճարանութիւններին խաղաղ կէք էր տալիս: Ժողովները գումարում էին երբեմն Թարութիւն Ամիրա Պեղձեանի և երբեմն արքունի ճարտարագետ Քրիզոր ամիրայի տանը:

Միութեան գործը գրեթէ զլուխ եկած էր և պատրիարքարանը եկեղեցին հետեւեալ զիջումներն էր արել միութիւնը զլուխ բերելու համար:

1. Հայ եկեղեցին Քաղկեդոնի ժողովը և Աւստին չը պէտք է նշովէր:
2. այլև ի շարս սրտոց՝ չը պէտք է յիշէր Յովհան Արտանեցուն և Քրիզորու Մովսէս Տաթևացիներին և Յ պէտք է ընդունէր Աերջին Օսման իւրի գործածութիւնը (ցանկացողների համար):

Այսպէս 1820 թուի ապրիլի 18-ին Գումագափուի մայր եկեղեցու մէջ փաստար հանգես կատարուելով Արքայեաններից հինգ փարդապետներ Գոլձեաններից երկու փարդապետներ խուան բազմութեան հետ մտնում են Հայոց եկեղեցու գիրկը: Աւթարութիւնը անսահման է:

Միութեան գործը ընդհանրացնելու համար ապագրում է միութեան խնդրի առիթով կայացած որոշումը հետեւեալ վերնագրով՝ «Բան Հրաւեր սիրոյ» Ազգային ժողովոյ հաւանութեամբ և խնդրանք ապեալ ի Վ. Պոլիս 1820. մայիսի 17. գրքի ճակատին գրուած է ս. Աուստրիչի պատկերը:

Քրիքը կազմուած է երեք մասներից. Ա. «Յաւաջարանութիւն» Բ. «Սուրբ և ուղղափառ փարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է. յորոյ վերայ միայն է խնդիրն» և Գ. «Վերջարանութիւն»:

Սոյն գրքի յառաջարանութեան մէջ յիշուած

է որ տան տարի առաջ, այսինքն 1810 թուին, պատրիարքներն\* էլ երեք տարի շարունակ ջանացել են սէր և միութիւն հաստատել ազգի բաժանեալ մասերի մէջ՝ բայց աշխատանքը ապարդիւն է անցել:

Աերջարանութեան մէջ Վ. Պոլսոյ այդ ժողովակը սինհոդոս է կոչուած և յիշուած է թէ այդ սինհոդոսին ներկայ են եղել Սայ Արախոս կաթողիկոսը որ պատահմամբ Պոլսումն էր. Վ. Պոլսոյ պատրիարք Արքիանուպոլսեցի Պողոս արքեպիսկոպոսը: Ս. Էջմիածնի և Երուսաղէմայ արքեպիսկոպոսներն ու գործակալները եղել են նաև շատ արքեպիսկոպոսների փարդապետներ, բոլոր եկեղեցեաց քահանայները, իշխանապետներն ու իշխանները՝ միութեակները, դանձապետները, եկեղեցականներն ու արհեստագործների բոլոր զխաւորները որոնք բոլորն էլ ստորագրել են արձանագրութիւնները որոյ իսկը պահպում է պատրիարքարանում, իսկ ապուած ընդորինակութիւնը կրում է վերնագիրս «Բան Հրաւեր Սիրոյ» Սակայն որպիսի անձերից էլ կաղում քննէր ժողովը, ընդհանուր առմամբ չէր կարող ազգային նշանակութիւն ունենալ, հետեւաբար և ժողովի վճիռը ազգի ընդհանրութեան համար պարտաւորական չէր:

Նախ որ եկեղեցու մէջ որ և է փոփոխութիւն մտցնելը ամէն անձնական իրաւասութիւնից բարձր է, լինի դա ընդհանրական կաթողիկոսն անգամ, որ ամենայն Հայոց հայրապետի կոչումն ունի: Յիշեալ սինհոդոս կոչուածը եկեղեցու մէջ այնպիսի փոփոխութիւններ էր մտցնել՝ որոնց դէմ եկեղեցին հաղարուտ տարիներով մարտակ է. իսկ սինհոդոս կոչուած ժողովակի նախագահը եղել է Պոլսոյ պատրիարքը՝ որ ըստ եկեղեցական կոչման՝ Վ. Պոլսոյ արքեպիսկոպոսն է՝ առաջնորդական իրաւամբ, ըստ հոգեւորին՝ ըստ ամենայնի ստորագրեալ Ամենայն Հայոց Հայրապետին: Երկրորդ՝ ժողովականները եղել են միայն Պոլսեցիք և այնտեղ պատահմամբ գտնուած հոգեւորականք, իսկ ազգային ժողով կազմուելու համար պէտք է որ ամբողջ ազգը ունենար իւր ընտրած ներկայացուցիչները, այն ինչ ժողովականները ոչ թէ ընտրութեամբ և հաւանութեամբ ազգի այլ իրանց անձնական գիրքովն էին նոյն պատիւը ստանձնել:

Ազգը դեռ իւր դժկամակութիւնը չէր հասցրել ի լուր պատրիարքի այդ անկոպար գործողութեան համար: Միութեան խնդիրը շատ Դանը եկաւ գաղատացի հասփեականներին ևս որոնք երբ տեսան թէ Պոլսո պատրիարքը յուլիսի 12-ին վերջին օժման իւր ևս արհնելով ուղարկեց եկեղեցիներին որ ցանկացող իւրանդներին օժեն, յարմար դէպքից օրուտ քաղելով օգտաւոր 7-ինս մի գաղա-

\* Յովհաննէս Զատարեան և Արամիս Բեօխան:

տացի հռոմէականի ձեռքը տուին «Լրաւեր սիրոյ» մասեանը Լուսաւորչու պատկերի վերայ պապի պատկերը մածուցած, ուղարկեցին հայոց արհեստաւորների մտ ժողովրդին գրգռելու. Ճարպիկ գաղտացի կաթողիկէր ջեբեռանոց հայ ծպտում՝ գոչում էր. «ինչ էր անհոգ նստել պատրիարքը ֆռանկացաւ. ուրացաւ ս. Էջմիածինը և Հռոմէայ ակնուորն հնազանդեց. սորանից յետոյ ս. Մեծնը վերացաւ. նորա տեղ աղցանի նման ձիվոյ պէտք է տապակուենք. էլ լսելու ժամանակ չէ՛ մենք վաղը պէտք է բողբոջենք՝ գուց էլ մեզ հետ միացէք. գնանք պատրիարքարան և իմացնենք որ մենք Լուսաւորչի որդիք ենք և ոչ Հռոմէայ պապերի»:

Այս ճարտարութեամբ կազմուած յորդորով ամբողջ ժողովուրդը յուզվում է, և լցուելով մայր եկեղեցին աղաղակում է. «Մենք հայ ենք, ս. Լուսաւորչի որդիք, ֆռանկ չենք լինի. թող գայ պատրիարքը ու մեզ ապահովանէ, Պոզոս պատրիարքը պատաւորվում է պատրիարքարանի լուսամտուտից դուրս փախչելով մի թուրքի տան մէջ ապաստանարան գտնելու. պատրիարքարանի գրասենքը խորտակվում էն: Պարզը վերահաստատելու համար՝ Բ. Գրան տախկանները (ենիշերներ) ոստիկանապետի հետ վրայ են հասնում՝ ամբողջ ցրվում և մի քանի զլխատորների ձերբակալելով բանտարկում են: Բանտարկեալները սկսում են զանազան մարդոց մասնել իրրև խոսովութեան պատճառների. բանտարկվում են շատերը: Բայց իսկական խոսվարար գաղտացին Եւրոպա փախած լինելով ազատվում է: Մասնավորում են մի քանի եպիսկոպոսներ էլ և նոյն ինքն Սոյ կաթողիկոս Վրահաւոր Բայց և շուտով ազատվում են: Մասնութիւնները շարունակվում են մինչև որ օգոստոսի 16 ին Մեծ Եպարքոսը Պոզոս պատրիարքին իւր մտ կանչելով կամենում է գիտնալ թէ ուրքեր են միութեան խնդիրը յառաջ բերելով խոսովութեան պատճառ գարնել և ի դարձանս իւր՝ իմանում է որ դոքս են Գրիգոր ճարտարագետը, Յարութին, Պեղծեանը, Ճանիկ Փափաղեանը, Մ. Յովհաննէս Երկանեանը և Պարագետ Աղուաւորեանը:

Արքայազն ութսունամեայ Գրիգոր ամիրա Սախայեան բոլոր յանցանքը իւր վերայ աննելով խնդրում է միւսներին արձակել իրանք իրանց գրգռման գործի մէջ յանցաւոր խոստովանուելին գեւ ուրիշ չորս հոգի էլ և բոլորի համար էլ մահուան դատաւճիւր կաշացաւ. Սախայեանին՝ սեպտեմբերի 18 ին Խաչվի բայի եօթներորդ օրը երկկոչեան ժամերգութեան ժամանակ «Լոյս դուարթը» ասելիս՝ Մայր եկեղեցու գրան տաջ կահեցին. մնացեալ չորսին էլ քաղաքի գանազան մասերում:

Հետեւեալ օրը մնացած բանտարկեալները ազատվում են, իսկ երեկոյնները արքորվում զանազան տեղեր:

Այսքան աղէաները միութեան խնդրից ծագելուց յետոյ էրը Պոզոս պատրիարքը վեղար և փլշոն ընդունող Երբայեան վանականներին հրաւիրեց պատրիարքարան՝ որ երկուսին ս. Էջմիածին երկուսին՝ Մշու ս. Պարագետ և երեքին էլ Երուսաղէմ ուղարկի՝ նորա փոխանակ պատրիարքարան գալու զիմեցին լատինացուց եկեղեցին. նոցա հետեւեց նաև արայեանների ժողովուրդը:

Հռոմէականները զարձեալ սկսեցին հակառակը գնալ Հայոց եկեղեցու նդովելով Գրիգոր և Մովսէս Տաթևացիներին ու Յովհան Արտանեցուն. իսկ Հայոց եկեղեցին հարազատ իւր նախնի սոցորութեանցը, մերժեց վերջին օժման իւզի գործաւսմիւրը և նդովում է Քաղկեդոնի ժողովն ու Լեւոնին:

Եւրպէս տեսնք և պէտք է տեսնենք 1810—1830 թուերը Յաճկահայոց, և ի մասնաւորի Կ. Պոլսոյ հայերի համար, շատ նշանաւոր շրջան է: Այդ շրջանում հայ լուսաւորչականներն ու հայ կաթողիկէները շատ մտնում են իրար, յառաջ է դալիս միութեան խնդիրը: Միութեանը գլխաւ բերելու համար երկու կողմն էլ արտաքուստ պատրաստակամութիւն է ցոյց տալիս եկեղեցական ձևերի և արարողութիւնների վերաբերութեամբ միմեանց դիջումներ անել: Բայց երբ արդէն միութեանը գլուխ եկած էր համարվում կաթողիկ հայք, բոլորովին անջատվում են և մինչև այդ ժամանակ, որ Հայոց պատրիարքի գերիշխանութեան տակ էին գտնվում և հայ համայնք էին ձանաչվում կառավարութեան առաջ, պնտահետև իրաւունք են ստանում կազմել առանձին կաթողիկ համայնք կաթողիկ պատրիարքի գերիշխանութեան տակ, Այս բանն նըպաստում են՝ ա. 1829 թուին սեպտեմբերի 14-ին ստաների և տաճիկների միջև կնքուած Ազրիանուպոլի գաշնագրի 12-րդ յօդուածը, որ է. «Լարկասուք Յաճկաց, որք են յոյնք, հայք, հոպմեական հայք և հրեայք ազատ լիցին ի պաշտել զո՛ւ իցէ հաւատս, և բնութիւն հաւատոյ և կրօնի մի լիցի ի կոզմանէ օսմանեան տէրութեան, ուստի բնութեամբ յեղաշրջիլ գրբիստանեայս ի մահմեդական օրէնս մի երբէք լիցի և հոպմեական հայք ազատ լիցին ի պաշտել զհաւատս իւրեանց», բ. Գաղղիացուց և Անգղիացուց պետակաների միջամտութիւնը, որի հետեւանքն եղաւ 1830-ի յունվարի 6-ին հրատարակուած հրովարտակը, որով արտորուած կաթողիկ հայերը վերագարւած իրանց բնակավայրերը, և իրաւունք ստացան սեպտական պատրիարք ու եկեղեցիներ ունենալու՝ այլևս լատինների եկեղեցին չը յաճախելու պայմանով (Պատմ. Հայոց Ա. Պեղպէրեան):

Յ. Վ. Ս.

